

ՎԱՀՐԱՄ ԲԵՐԶԻԲԱՆՅԱՆ

ՄԵՐ ՎԱՋ ՆԱԽՆԻՆԵՐԸ



ՀԱՅԿԱԲԵՏԿԱՆՑ

Վ. ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ

087.1:9 (47.025)

թ-52

ԱՏՈՒԳԱՆՄ Է 1961 թ.

ՄԵՐ ՔԱԶ ՆԱԽՆԻՆԵՐԸ

8079

8079

2098

ՀԱՅԹԵՏՀՐԱՏ

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Ե Ր Ե Վ Ա Ն

1948

Ծաղիկը և իշուսեացիաներ
ժող. եկարիչ շ. ՎՈՋՈՅԱՆԻ

A $\frac{\text{II}}{5018}$

В. ТЕРЗИБАШЯН
Наши храбрые предки
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1943

ՄՈՒՇԵՂ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ



այ ժողովուրդը դարերի ընթացքում պայ-
քարել է իր ազատութեան և անկախու-
թեան համար:

Մեզնից մոտ 1600 տարի առաջ Հայաստանում իշխում էր Արշակ II Թագավորը: Նա հաջորդել էր իր հորը, Տիրան Թա-
գավորին: Պարսկաստանի Շապուհ արքան նենդությամբ հրավի-
րել էր Տիրանին հացկերութի ու ձերբակալելով նրան զրկել էր
աչքի լուսից:

Այդպիսով Շապուհը նպատակ ուներ իրեն ենթարկել Հայաս-
տանը, նվաճել այն և դարձնել Պարսկաստանի մի մասը: Սա-
հայն Արշակը եռանդուն և քաջ աղամարդ էր: Նա բարեկամա-
կան հարաբերություններ հաստատեց հույների (Բյուզանդիայի),
հեթ և նրանց օգնությամբ երկար տարիների ընթացքում պա-
ռերազմ մղեց պարսիկների դեմ Հայաստանի անկախությունը
պաշտպանելու համար: Հայկական զորքը հերոսաբար կռվեց
օտար նվաճողների դեմ Վասակ Մամիկոնյան սպարապետի հրա-
մանատարությամբ:

Վասակ Մամիկոնյանը Արշակ Թագավորի աջ թեև էր: Նա
հմուտ կերպով դեկավարում էր հայկական զորքը և մի շարք
ճակատամարտերում այնպիսի պարտութեան մատնեց պարսկա-
կան բանակներին, որ Շապուհ արքան ստիպված եղավ հաշտու-
թեան առաջարկ անել Արշակ Թագավորին:

Սահայն Շապուհի նպատակն այլ էր: Նա ցանկանում էր
նենդությամբ թափառել մեջ ձգել հայոց Թագավորին: Շապուհը
պատգամավոր ուղարկեց Արշակի մոտ և հրավիրեց նրան դալ իր
մայրաքաղաքը՝ Տիգրան՝ բանակցելու: Արշակը կասկածանքով
գերաբերվեց այդ հրավերին: Նա չէր մոռացել իր դժբախտ հոր՝
Տիրանի օրինակը: Սահայն պալատական իշխանները համոզեցին
նրան ընդունել պարսից Թագավորի հրավերը, ասելով թե Շա-

պուհը հանդիսավոր երգում է տվել ոչ մի վնաս չտալ հայոց թաղավորին և վարվել նրա հետ որպես իրեն հավասարի:

Արշակը իր սպարապետ (ընդհանուր հրամանատար) Վասակ Մամիկոնյանի հետ ճանապարհ ընկավ դեպի Պարսկաստան հաշտության բանակցություններ վարելու Շապուհի հետ, հույս ունենալով վերջ տալ անվերջ պատերազմներին, որոնք քայքայում էին երկիրը: Սակայն Շապուհը ուխտադրուժ կերպով խախտեց իր երդումը: Նա հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ ոսկի շղթաներով կապել տվեց Արշակին և կուրացնելով նրան՝ բանտարկեց Անհուշ բերդում: Տիրան թաղավորի դժբախտ ճակատադրին ենթարկվեց նաև նրա որդին, որը երկար տարիների ընթացքում քաջությամբ կռվել էր Շապուհի դեմ, շատ անգամ ջախջախելով նրա բանակները:

Վայրագ Շապուհը ոչ պակաս դաժանությամբ վարվեց անվհեճեր զորավար Վասակ Մամիկոնյանի հետ: Նա կանչել տվեց Վասակին իր առաջ, սկսեց հանդիմանել և հայհոյել հայոց սպարապետին:

— Հ^օը, աղվի՛ս, — ասաց Շապուհը Վասակին, — այդ դո՞ւ էիր, որ այնքան նեղություններ պատճառեցիր մեզ, երկար տարիների ընթացքում կոտորեցիր մեր բանակները, հիմա ի՞նչ կարող ես անել, ես կհրամայեմ մեռցնել քեզ աղվեսի մահով:

Քաջարի զորավարն այսպես պատասխանեց Շապուհին.

— Այժմ դու ինձ այսպես փոքր տեսնելով (Վասակը կարճահասակ էր), չես կարողանում հասկանալ իմ մեծությունը: Մինչև այսօր ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ դու ինձ հետ վարվում ես իբրև աղվեսի: Սակայն քանի դեռ ես Վասակ էի, ես մի հսկա էի, իմ մի ոտքը մի սարի վրա էր, մյուսը մի այլ սարի. երբ աջ ոտքիս էի հենվում, աջակողմյան սարն էր խոնարհվում, և երբ ձախ ոտքիս էի հենվում, ձախակողմյան սարն էր խոնարհվում:

Պարսից Շապուհ արքան հարց տվեց Վասակին.

— Ասա՛ տեսնենք, որո՞նք էին այդ սարերը:

Վասակ Մամիկոնյանը պատասխանեց.

— Երկու սարերից մեկը դու էիր, մյուսը հույների կայսրը, բայց ափսոս, բախտը դավաճանեց մեզ, արա, ինչ ձեռքիցդ դալիս է:

Կատաղած Շապուհը հրամայեց մորթադերձ անել հայ զորա-



վարին, կաշին լցնել հարդով և տանել Անհուշ բերդը հայոց կա-
լանավոր թագավորի մոտ:

Հայաստանը զրկվեց իր թագավորից և սպարապետից: Բայց
հայ ժողովուրդը չհուսալքվեց: Վրեժի ցատումը փոթորկվեց
հայրենասերների սրտում:

Արշակի կինը՝ Փառանձեմ թագուհին, իր ձեռքն առավ երկ-
րի իշխանության դեկը: Արշակի որդին՝ Պապը դեռ անչափահաս
էր: Փառանձեմը ուժեղ կամքի տեր և վճռական կին էր: Նա իբ-
րուցը հավաքեց հայ իշխաններին, որոնք հավատարիմ էին
մնացել իրենց հայրենիքին:

Հայկական զորքը ամրացավ Արտազերս անառիկ ամրոցում:
Շապուհը հրամայեց իր զորքին պաշարել Արտազերս բերդը:
Պարսիկներին օգնում էին մի քանի դավաճան հայ նախարարներ:
Պաշարումը երկար տևեց: Հայկական զորքը հերոսաբար դիմա-
դրում էր պարսից զրոհներին:

Վրա հասավ ձմեռը, Շապուհի բանակը շատ նեղություններ
կրեց, տալով հսկայական կորուստներ: Հուսահատված այդ ա-
նառիկ բերդը գրավելուց, Շապուհը փորձեց համոզել հայոց
թագուհուն անձնատուր լինել, խոստանալով ոչ մի վնաս չտու-
յալ պաշարվածներին:

Սակայն խելոք Փառանձեմը չխաբվեց Շապուհի նենգավոր
խոստումներով: Դեռ ավելին, հայկական զորքի մի մասը գիշե-
րով, երբ պարսկական բանակը խոր քնի մեջ էր, դուրս եկավ
ամրոցից և հանկարծակի զրոհելով թշնամիների վրա, մեծ ջարդ
տվեց նրանց:

Արաքս դեռի հովտում անմատչելի քարաժայռի վրա բարձրա-
նում էր Արտազերս անառիկ ամրոցը: 11-հազարանոց հայկական
զորքը արևաբար պաշտպանում էր հայ ժողովրդի անկախության
այդ միջնաբերդը Շապուհի հորդանների դեմ: Փառանձեմ թա-
գուհին և հայ նախարարները վճռել էին ամեն դնով դիմադրել
օտար նվաճողներին և միջոցներ էին փնտռում այդ նպատակին
իրագործելու համար: Հարկավոր էր գտնել օգնական մի ուժ, մի
դաշնակից, որի օգնությամբ հնարավոր լիներ հետ մղել ուժեղ
թշնամու հարձակումը: Այդպիսի մի դաշնակից կարող էր լինել
Բյուզանդիոնը, որը երկար տարիների ընթացքում պատերազմ
էր մղում Պարսկաստանի դեմ:

Հայոց թագուհին և նախարարները (իշխանները) վճռեցին
մի պատգամավորութուն ուղարկել Բյուզանդիայի Վադես կայս-

բի մոտ, որպէսզի նա օգնի Հայաստանին որպէս հին դաշնակցի և քրիստոնյա պետութեան: Պատգամավորութիւնը դադարնի կերպով մեկնեց Հայաստանից դեպի Բյուզանդիոն: Այդ պատգամավորութեան հետ էր նաև կուրացած Արշակի և արիասիրտ Փառանձեմի որդին՝ պատանի դահաժառանգ Պապը, որին ուղեկցում էր Շապուհի հրամանով չարաչար կերպով սպանւած Վասակ Մամիկոնյանի որդին՝ Մուշեղ Մամիկոնյանը:

Երկու տարաբախտ հայրերի որդիները, անհուն վրեժով լի, իրենց հայրենիքը լուրջ սպառնալիքից ազատելու վճռականութեամբ, ճանապարհ ընկան դեպի Բյուզանդիոն, Կ. Պոլիս:

Վաղեա կայսրը սիրով ընդունեց հայ իշխաններին, որովհետեւ նա դիտեր, որ Հայաստանը իր արեւելյան սահմանների վրա մի ուժեղ պատվար է Պարսկաստանի դեմ: Մակայն զգուշանալով Շապուհին պատերազմ հայտարարելուց, նա խոստացավ օգնել հայերին, տալով նրանց օգնական զորք Տերենտիոս զորավարի հրամանատարութեամբ: Պապը, Մուշեղ Մամիկոնյանը և մյուս հայ իշխանները վերադարձան Հայաստան:

Այդ ժամանակ Շապուհն ուժեղացրել էր Արտազերսի պաշարումը: Ամբողջ ամիս լի քան մի տարի դիմադրել էր սոսկալի զորհներին: Պաշարը սպառնւելու վրա էր, բացի այդ բերդում համաճարակ ընկավ, զորքերից շատերը մեռան: Պարսկական զորքը չկարողացավ ընկճել պաշարվածների դիմադրութիւնը, բայց սույն ու ժանտախտը ստիպեցին նրանց անձնատուր լինել: Փառանձեմ թագուհին ընկավ թշնամիների ձեռքը, չնայած որ նրան խոստացել էին կյանքի ապահովութիւն և պատիւներ: Մյուս զերիների հետ միասին նրան քնեցին Պարսկաստան, հետո Շապուհի հրամանով չարաչար սպանեցին:

Պապը և Մուշեղը լսեցին այս բոլորը և վրեժխնդրութեամբ բոցը այրեց նրանց սիրտը:

Մինչ այդ Շապուհի զորքերն ամբողջ էին Հայաստանը երկու հայ դավաճան նախարարների՝ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի ղեկավարութեամբ: Այս այն Վահանն է, որին սպանեց իր որդին՝ հայրենասէր Մամվելը, սրբելով իր տոհմի պատիւն այդ դավաճանի արատից:

Շապուհը ցանկանում էր հրով և սրով իրեն ենթարկել Հայաստանը:

Մուշեղ Մամիկոնյանը Հայաստան վերադառնալով անմիջապէս սկսեց հաւաքել ցիրուցան եղած հայկական զորքը. ամեն

կողմից նրա մոտ էին գալիս վրեժով լցված երիտասարդներ, որոնց հայրերն ու մայրերը կոտորվել էին Շապուհի զորքերի ձեռքով: Կազմվեց վրիժառուների մի բանակ Մուշեղ զորավարի գլխավորությամբ, որը երգվեց մինչև վերջին շունչը կռվել օտար նվաճողի դեմ, լուծել իր հայրենիքի, իր ազգակիցների, իր հոր վրեժը:

Մուշեղը նշանակվեց հայկական զորքի սպարապետ, իր հոր՝ Վասակ Մամիկոնյանի փոխարեն: Իսկ Պապը հաջորդեց իր հոր՝ Արշակին:

Մուշեղ Մամիկոնյանը աստ հաղարանոց բանակով արշավեց արքայական զորքի վրա և անսպասելի հարձակումով ջախջախեց նրան: Թշնամիները խուճապահար փախան և Հայաստանի դրեժե ամբողջ տերիտորիան ազատվեց նրանցից: Ներկիրը մի աստվածանակ խաղաղվեց: Հայկական զորքի թիվը գնալով աճում էր, և շուտով հասավ քառասուն հազարի: Իբրև օղնական ուժ եկել էր նաև բյուզանդական զորքը: Մուշեղ Մամիկոնյանն ամբողջրեց Հայաստանի սահմանները թշնամու անակնկալ հարձակումները կանխելու համար:

Պարսից Շապուհ արքան հեշտ աչքով չէր կարող նայել այս բոլորին: Նա կատաղել էր հայերի, ինչպես նաև բյուզանդացիների դեմ, որոնք իբրև օգնական ուժ միջամտում էին Հայաստանի գործերին: Նա հրամայեց իր զորավարներին կազմել մի հսկայական բանակ ու արշավել Հայաստանի վրա: Մուշեղը քնած չէր, նա սպասում էր այդ արշավանքին, ուստի իր քառասուն հազարանոց բանակը կենտրոնացրել էր Ատրպատականի (Պարսկաստանի հյուսիսային մասի) սահմանի վրա:

Շապուհի բանակը արագ բեթացքով հասավ Ատրպատական և կանգ առավ Թավրիզ քաղաքի մոտ: Մուշեղը չսպասեց, որ թշնամին անցնի Հայաստանի սահմանը, այլ ինքն անցավ սահմանը և հանկարծակի գրոհեց արքայական զորքի վրա: Թշնամին ցիրուցան եղավ, շատերը կոտորվեցին, որոնց թվում նաև անվանի իշխաններ: Ինքը Շապուհ արքան հաղիվ կարողացավ ձեռնած փախչել, թողնելով իր գանձերը, կանանոցը (այն ժամանակ իշխանների մոտ ընդունված էր լաղժակնությունը) «տիկնանց տիկնոջ», այսինքն թաղուհու հետ միասին:

Մուշեղ Մամիկոնյանը վեհանձնությամբ վարվեց Շապուհի կանանց հետ. նա հետ ուղարկեց նրանց Շապուհին, առանց ոչ մի վնաս պատճառելու, սակայն իր հոր մահվան վրեժը լուծե-

լու համար հրամայեց մորթագերծ անել Շապուհի 600 իշխաններին, հարգով լցնել տվեց նրանց կաշիները և աղբակս ուղարկեց Շապուհի մոտ:

Մուշեղի հաղթանակն ահ ու սարսափ տարածեց թշնամիների վրա: Հեծած իր սպիտակ նժույգը խիզախ հայ զորավարն առաջնորդում էր հայկական զորքը և խուճապի մատնում Շապուհի զորքերին: Հայկական զորքը վերադարձավ հարուստ ավարով, որի մի մասը բաժանվեց զինվորներին որպես պարգև իրենց տարած հաղթության համար:

Սակայն մի քանի նախանձոտ իշխաններ չարախոսեցին Պապ թագավորին Մուշեղի մասին, ասելով, թե նա հավատարիմ չէ հայոց թագավորին, որովհետև աղատ է արձակել Շապուհի կանանց:

Երեսասարգ, անսիրճ թագավորը հավատաց չար լեզուներին և իր սրտում ոխ պահեց Մուշեղի դեմ:

Պարսից Շապուհ արքան չէր մոռացել իր խայտառակ պարտությունը: Նա նոր բանակ հավաքեց և հսկայական ուժերով արշավեց Հայաստանի վրա, մտավ երկրի խորքերը, հասնելով մինչև Բաղրևանդ դավառը: Հայոց Պապ թագավորը իր կողմից հրամայեց զորքին հավաքվել Նփրատ գետի ափին: Հունաց (բյուզանդական) զորքը որպես դաշնակից եկել էր օգնելու հայերին:

Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը 80 հազարանոց բանակով պատրաստվում էր դիմադրել թշնամիների հարվածին: Ծակատամարտը տեղի ունեցավ Նպատ լեռան մոտ Զիրավի գալտում: Պապ թագավորն ուղում էր մասնակցել մարտերին, սակայն իշխանները խորհուրդ տվին նրան Ներսես կաթողիկոսի հետ միասին լեռան գագաթից դիտել միայն ճակատամարտը և մարտի ղեկավարությունը հանձնել Մուշեղին:

Կասկածոտ թագավորը չէր մոռացել Մուշեղի մասին եղած չարախոսությունը, իբր թե նա բարեկամ է Շապուհին: Ուստի նա չէր վստահում նրան: Մուշեղը ներկայացավ թագավորին և ասաց նրան.

— Ես պատրաստ եմ մեռնելու իմ հայրենիքի համար, մի՛ հավատար զրպարտիչներին:

Պապը հուզվեց Մուշեղի անկեղծ խոսքերից, հրամայեց բերել իր սեփական նժույգը և նիզակը և ցանկացավ նվիրել քաջ

գործարարին, բայց Մուշեղը մերժեց ընդունել այդ նվերը, ասելով.

— Ես կհրավեմ իմ սեփական ղենքերով, և երբ կվերադառնամ, դու կարող ես ընծայել ինձ, ինչ սիրտդ կամենում է:

Հետո նա բերեց իր դրոշը և ղենքերը Ներսես կաթողիկոսին, որը օրհնեց նրանց: Մուշեղը հեծավ իր նստույգը և նետովեց ղեպի մարտ:

Սկսվեց արյունալի ճակատամարտը: Հայկական հեծելազորը, որի մի թևը պաշտպանված էր հույն վահանակիրների կողմից, խիզախորեն դրոհեց թշնամիների մարտական շարքերի վրա, ճեղքեց դրանք և խորացավ նրանց մեջ: Հայ նիզակավորներն անխնա խոցոտում և կոտորում էին Շապուհի զորքերին, որոնք չդիմանալով հարվածին, սկսել էին նահանջել:

Նպատ լեռան գաղաթից Պապ թաղավորը և Ներսես կաթողիկոսը դիտում էին այդ արյունահեղ ճակատամարտը: Երբ թաղավորը տեսավ, որ Մուշեղը շատ է խորանում թշնամիների շարքերի մեջ, նորից կասկածն ընկավ նրա սիրտը: Նա կարծեց, թե Մուշեղն անցնում է թշնամիների կողմը, և զղջաց, որ վրստահել է նրան: Սակայն Ներսես կաթողիկոսը, որ լավ էր ճանաչում հայոց սպարապետին, թաղավորին ասաց.

— Ոչ, այդպես մի՛ մտածիր, արքա՛, Մուշեղն այնպիսի մարդ է, որ դավաճանի, դու դեռ կտեսնես ինչ քաջություններ կգործի նա:

Եվ իրոք շուտով իրականացան այդ խոսքերը: Հայկական զորքը, հույների օգնությամբ, լիակատար հաղթանակ տարավ Շապուհի բանակի վրա, որը մեջքը չուռ տվեց ու փախավ: Հայերը հետապնդեցին թշնամիներին մինչև երկրի սահմաններից դուրս, հսկայական կորուստներ պատճառելով նրանց:

Մուշեղ Մամիկոնյանն արշավում էր ամենից առաջ. նա հասավ աղվանների թաղավոր Ուռնայրի հետևից, որը միացել էր Շապուհին և նրա հետ միասին եկել էր Հայաստանը ստրկացնելու: Այս թաղավորը շատ պարծենկոտ էր և կռիվից առաջ խնդրել էր Շապուհին, որ թույլ տա իրեն մեն մենակ կռվելու հայ զորավարի դեմ:

Մուշեղ Մամիկոնյանի ականջին հասել էր այդ լուրը: Դրա համար էլ հարձակելով Ուռնայր թաղավորին, նա իր նիզակի կոթով սկսեց ծեծել նրա գլուխը, բայց չսպանեց նրան, այլ բաց թողեց և ասաց.

— Գնա՛ւ և շնորհակալ եղիր բախտից, որ թաղավոր ես, դրա համար էլ չեմ սպանում քեզ, որովհետեւ իմ կանոնն է չսպանել թաղ կրողներին:

Աղվանից Ուռնայր թաղավորը զարմացած Մուշեղի վեհանձնությունից, ամոթահար փախալ իր երկիրը և այնուհետեւ դարձաւ նրա բարեկամը:

Ամբողջ Հայաստանում տոնվեց այս մեծ հաղթանակը օտար երկրյա հախչատակիչների դեմ: Մուշեղ Մամիկոնյանի անունը հռչակվեց ամեն տեղ. նա զարծալ հայրենիքի ազատարարը:

Սակայն Պապ թաղավորի սրտում կասկած ընկալ Մուշեղի հալածարարութեան նկատմամբ՝ Աղվանից Ուռնայր թաղավորին ազատ արձակելու պատճառով:

Նա կանչեց Մուշեղին և սկսեց հանդիմանել նրան: Անվեհեր գորավարը թաղավորին պատասխանեց.

— Ես կոտորեցի այն թշնամիներին, որոնք ինձ հալածար էին, իսկ ով թաղ ունի իր դլխին, իմ հալածարը չէ, այլ քո ինչպես որ ես իմ հալածարներին սպանեցի, այնպես էլ դու եկ քո հալածարներին սպանի՛ր: Ես երբեք ձեռք չեմ բարձրացնի թաղավորի վրա: Այսպես էր հին ժամանակների տաղետական կանոնը:

Պապ թաղավորը լսելով այս համարձակ ու անկեղծ խոսքերը, հուզվեց, ոտքի ելավ իր դահից և դրկելով Մուշեղին, առաց.

— Այո՛, մահվան են արժանի այն մարդիկ, ովքեր հանդընում են զրպարտել Մուշեղին, այս քաջ և ազնիվ մարդուն: Մուշեղը նույնքան պատվավոր տոհմից է ինչպես մեր տոհմը, նրա նախնիքը զոհել են իրենց կյանքը մեր նախահայրերի համար, նրա հայրը իր կյանքը զոհեց իմ հոր համար: Մուշեղը այնպիսի հաղթանակներ է տարել, որ աղահուլիլ է մեր երկրի անվտանգությունը և խաղաղությունը:

Պապ թաղավորը մեծ և թանկարժեք ընծաներ տվեց Մուշեղին և իբրեւ ընդանուր հրամանատարի շնորհեց բարձր պատիվներ:



Սակայն խաղաղությունը երկար չտևեց: Պարսից արքա Շապուհը նորից հարձակվեց Հայաստանի վրա: Այս անգամ էլ ճակատամարտը կատաղի եղավ: Հատկապես հայ նիզակավորները

մեծ կռանդով զբոհում էին թշնամիների վրա, ձիերից ցած տապալում նրանց աղաղակելով. «զոհվիր մեր թագավոր Արշակին, հանուն Արշակի»:

Հայկական և հունական բանակը, շրջապատված վահանակիներով, ասես մի ամրացած քաղաք լինե՛ր: Երբ պարսիկական զորքն սկսում էր նեղել հայերին և հույներին, սրանք իսկույն մտնում էին վահանակիների կողմից կազմված շրջափակի մեջ և այնտեղ հանգստանում էին, պաշտպանված նրանց վահաններով, ինչպես մի ամրոցում: Մի քիչ հանգստանալուց հետո նրանք կրկին դուրս էին գալիս և զրոհում թշնամու վրա: Պատերազմի այս տակտիկան նորություն էր պարսիկների համար, ուստի նրանք չկարողացան դիմադրել դաշնակիցների զրոհին և սկսեցին նահանջել: Ինքը Շապուհն արքան փախավ փոքրաթիվ թիկնապահներով, հեռանալով Հայաստանի սահմաններից:

Մուշեղ Մամիկոնյանը կրկին հաղթական վերադարձավ: Երկիրը նորից խաղաղվեց, այս անգամ ավելի երկարատև: Արտաքին ուժեղ թշնամուց երկիրը ապահովելուց հետո, սպարապետն սկսեց ամրացնել սահմանները, հնազանդեցրեց այն իշխաններին, որոնք ապստամբել էին թագավորի դեմ և սպառնալիք էին հայրենիքի միասնականության համար:

Գիշեր ու ցերեկ Մուշեղ Մամիկոնյանը արթուն հսկում էր հայոց աշխարհի վրա, թույլ չտալով որ թշնամին մոտենա նրա սահմաններին: Քաջ զորավարը իր ամբողջ կյանքը նվիրել էր իր հայրենի երկրին: Նրան զբաղեցնում էր միայն մի միտք, ապրել և քաջաբար մեռնել հայրենիքի համար, ինչպես գրում է Հայ պատմագիր Փավստոս Բյուզանդը, — իր քույրերի ու եղբայրների համար, ազգականների ու բարեկամների համար, մի խոսքով իր ժողովրդի համար, որի շահերից բացի նա չունե՛ր այլ շահեր:

Թշնամիները փորձել էին նրա ուժը և չէին համարձակվում չափվել նրա հետ: Ինքը Շապուհ թագավորը առջած էր այն կորովի վճռականությունից և հայրենասիրությունից, որոնցով տոգորված էր Մուշեղը: Իր պալատականների հետ Շապուհը հիացմունքով էր խոսում հայոց զորավարի մասին, որի «զբոհներից ասես հուր է ժայթքում, իսկ ինքը նման է հրաբորբոք բոցի, որից այրվում են չոր մացառները»: «Երանի այն թագավորին, որ ունի նման զորավար և նման զղացմունքներով ոգեշնչված բանակ» — բացականչում էր Շապուհը:

Նույնիսկ թշնամին ստիպված էր խոստովանել հայրենասեր զորավարի արիութիւնը: Նա տեսնում էր, որ Մուշեղը պայքարում է իր հայրենիքի ազատութեան համար, Շապուհն զգում էր իր անզորութիւնը այն մարդկանց դեմ, որոնք մնում են ավելի շուտ մեռնել, քան դառնալ օտար նվաճողի ստրուկները:

Պապ թագավորի մահից հետո, Մուշեղ Մամիկոնյանը շարունակեց նույն եռանդով ու մտահանութեամբ պաշտպանել իր հայրենիքը: Նա արդեն ծերացել էր, սակայն միշտ դտնվում էր իր զորքի գլուխ որպէս սպարապետ:

Պապին հաջորդող Վարդգէս թագավորը նախանձեց Մուշեղի վիռքին: Ժողովուրդը սիրում էր հայրենասեր զորավարին, մեծարում նրան ավելի քան որեւէ մեկ այլ իշխանի: Նրկար քաղաքի ընթացքում Մուշեղը անձնագործ կերպով պայքարել էր օտարերկրյա թշնամիների դեմ, պաշտպանել երկիրը աղետներից և ստրկացումից, մասնակցել բազմաթիւ ճակատամարտերի և միշտ մնացել էր անվնաս:

Նրա քաջութիւնը առասպելի կարգ էր անցել, և ժողովուրդը նրան համարում էր անմահ: Ահա թե ինչու երբ ծերունի ռաբարապետը դավադրաբար սպանվեց թագավորի վարձկանների ձեռքով, մարդիկ չէին հավատում նրա մահվան: Ժողովրդի դիտակցութեան մեջ արմատացած էր այն հավատը, թե հայրենիքի պաշտպան հերոսները չեն մեռնում: Նրանք ապրում են սերունդների հիշողութեան մեջ դարե ի դար: Հայրենիքը երախտագիտութեամբ արձանագրում է նրանց անուններն իր պատմութեան մեջ ոսկե տառերով:

Մուշեղ Մամիկոնյանը այդ հերոսներից է, որին ավելի քան մեկ և կես հազարամյակ չի մոռացել հայ ժողովուրդը: Նրա քաջարի օրինակը խանդավառում է այսօր հայ ժողովրդի բոլոր զավակներին, որոնք հայրենական պատերազմի ճակատներում անձնվիրաբար մարտնչում են մեր օրերի ճիշդ Շապուհի՝ Հիւրիկի և իր արյունաբոս ուսմանների դեմ:

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ



նցել էր մոտ 80 տարի այն օրից, երբ հայկական զորքը Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարութեամբ աղատադրական պայքար էր մղում Շապուհի բանակների դեմ: Հայ ժողովուրդը, քաղական երկար տևող խաղաղության շնորհիվ Հայաստանի Վառձապուհ թագավորի օրով հանդիստ չունչ քաշեց: Մինչ այդ մեր նախնիքը չունեին սեփական տառեր և գրում էին ուրիշ ազգերի տառերով: Մեսրոպ Մաշտոց գիտնական վարդապետը 412 թվին կատարեց հայ գրերի դյուռը: Սկսվեց հայ գրականությունը զարգացման նոր դարաշրջան, որը պատմության մեջ հայտնի է ոսկեդար անունով: Դա հինգերորդ դարն է, երբ հանդես եկան այնպիսի հռչակավոր պատմագիրներ և գրողներ, ինչպես Մովսես Խորենացին, Կորյունը, Եզնիկ Կողբացին, Ղազար Փարպեցին, պատմագիր-բանաստեղծ Եղիշեն, փլիթագիր Դավիթ Անհաղթը և ուրիշները:

Հայ գրականության զարգացումը օգնեց ամրացնելու ժողովրդի միասնությունը, էլ ավելի ուժեղացրեց նրա մեջ տեղեկության աղբյուրի կուլտուրան, դեպի հայրենիքը:

Չնայած Արշակունիների տոհմը 428 թվից սկսած այլևս չէր իշխում Հայաստանում, և երկիրը կառավարվում էր մարզպաններով, սակայն հայ նախարարները պահպանել էին իրենց անկախությունը: Պարսից արքաները մի առ ժամանակ չէին փորձում դիպչել հայ ժողովրդի ազգային սովորություններին և հավատին. նրանք խրատվել էին Շապուհի փորձից, որը չարաչար պարտություն էր կրել:

Սակայն Պարսկաստանի դաժն բարձրացավ մի նոր Շապուհ, Սասանյան Հազկերտ II թագավորը: Այս փառասեր և վայրադ թագավորը վճռել էր նվաճել ամբողջ Ասիան, կործանել հայ ժողովրդի անկախությունը, ոչնչացնել նրա կուլտուրան և գրական-

նությունը, որն ոկսել էր ծաղկել մեծ թափով: Հաղկերտը նպատակ ուներ նաև մի ուժեղ հարված հասցնել Բյուզանդիոնին, որը կարող էր օգնել իրեն հավատակից այլ ժողովուրդներին, որոնց թվում նաև հայերին:

Որպես մոլի բռնակալ Հաղկերտը չէր կարողանում հանդուրժել, որ մյուս ժողովուրդները լինեն ազատ և անկախ: Նա «գոռոզանում էր,—գրում է Վ դարի հայ պատմագիր Եղիշեն,—և որպես կատաղած ցուլ հող էր հանում երկրի չորս կողմը... սրովհետև նրա սրտին շատ մոտ էին խռովությունը և արյունահեղությունը»:

Հաղկերտը մոնչալով հրաման է արձակում ասելով. «Երգվել եմ արեգակին, մեծ աստծուն (այն ժամանակ պարսիկները պաշտում էին արևն ու կրակը, դրա համար էլ կոչվում էին կրակապաշտ) ամեն ազգ և լեզու, որ իմ իշխանության տակ է, պետք է հրաժարվի բոլոր օրենքներից և միայն երկրպագի արեգակին, զոհ մատուցելով և նրան աստված կոչելով»:

Հաղկերտը մի հրովարտակ ուղարկեց հայերին, առաջարկելով նրանց թողնել քրիստոնեությունը և ընդունել զրադաշտական կրոնը. դա մի պատրվակ էր Հայաստանը նվաճելու համար: Հայ ժողովուրդը լավ էր հասկանում այդ. դրա համար էլ նա ռաբի ելավ իր անկախությունը պաշտպանելու:

Անդղ դուռդաքաղաքում ժողովուրդը մի կերպակի օր հարձակվեց պարսից մոզերի (կրակապաշտների զբմերի) և զինվորների վրա, որոնք եկել էին քրիստոնեական եկեղեցում բռնի ուժով կրակատուն հաստատելու: Ժողովրդի ցասումից սարսափած զբմերի մեծ մասը կոտորվեց, իսկ մնացածներն իրենց խուճապահար զորքի հետ փախան:

Դա ժողովրդական շարժում էր, ուղղված օտար նվաճողների և հափշտակիչների դեմ: Տիրում էր հայրենասիրական մեծ խանդավառություն: Ատելություն հզոր արեք բարձրացավ այն դավաճանների դեմ, որոնք ռոնակոխ անելով իրենց հայրերի ու պապերի օրենքները, միացել էին հայրենիքի թշնամիներին և խոցոտում էին իրենց սեփական երկիրը: Ամբողջ երկրում տիրեց մի նշանաբան— չխնայել դավաճանին, եթե նույնիսկ նա լինի քո հարազատ հայրը, որդին, կինը կամ ամուսինը:

Հայ դավաճան իշխաններից առանձնապես մեծ հարված հասցրեց Հայաստանին Վասակ Սյունին: Նա դադոնի կերպով անցավ թշնամիների կողմը և ամեն կերպ աշխատում էր թու-

լացնել հայերի ուժը: Մահայն ժողովրդի վճռականութիւնն անսասան էր: Նա չէր ուզում դառնալ Հաղկերտի ստրուկը, անբան, անյեղու մի անասուն, որն ընդունակ է միայն տաժանելի աշխատանք կատարել տերերի համար: Ժողովրդի հետ էին ուխտապահ, այսինքն հայրենիքին հավատարիմ մնացած իշխանները, որոնց ղեկավարն էր հայրենասեր զորավար քաջ Վարդան Մամիկոնյանը:



Վարդանը Մամիկոնյանների տոհմի այն փառապանծ սպարապետներից մեկն է, որի անունը անմահացել է դարերի մեջ: Թերևս հայոց պատմութեան ոչ մի հերոս չի շրջապատված այնպիսի փառքի պսակով, ինչպես Վարդան Մամիկոնյանը: Նա ավելի քան ուրեք մեկը հայ ժողովրդի հին անցյալում մարմնացրել է իր մեջ ժողովրդի ազատութեան զաղափարը և ողորմաբախտաբար զոհուել է իր կյանքը հայրենիքի ազատութեան համար: Սերունդների զիտակցութեան և հիշողութեան մեջ Վարդանը մնացել է որպէս ազգային հերոս-նահատակի տիպար, որպէս մեծ հայրենասեր:

Վարդանի հայրն էր հայոց սպարապետ Համազասպը: Սպարապետութիւն, այսինքն զորքի ընդհանուր հրամանատարութեան պաշտօնը ժառանգական էր Մամիկոնյանների համար, անցնում էր հորից որդուն: Հաջորդելով իր հօրը, Վարդանը մեծ համբավ էր ձեռք բերել իբրև հմուտ զորավար և պետական գործիչ: Թե՛ Բյուզանդիոնի Թեոդոս կայսրը և թե՛ պարսից Վուսթ թագավորը մեծ հարգանքով էին վարվում Մամիկոնյան իշխանի հետ, զնահատելով նրա խելքն ու արիւթիւթիւնը: Իբրև սպարապետ Վարդանը ղեկավարել էր մի շարք պատերազմներ և միշտ հաղթական էր դուրս եկել նրանցից:

Այժմ հայրենիքը վտանգի մեջ էր ու կարիք ուներ Վարդանի նման քաջ զորավարի: Նա անցավ ժողովրդական այդ մեծ շարժման գլուխ: Ծահապիվանում գումարիւց հայ իշխաններին ու զորավարներին ժողով, որտեղ բոլոր ուխտապահ նախարարները երգվեցին մինչև արշան վերջին կաթիլը պաշտպանել հայրենիքը և ազգային անկախութիւնը:

Այդ ժամանակ Հաղկերտը հղացել էր մի նեղավոր ծրագիր: Պարսկական բանակը բազմաթիւ մողերի ուղեկցութեամբ սկսել էր արշավել դեպի հյուսիս՝ քրիստոնյա Աղվանից երկրի վրա:

որը Հայաստանի դաշնակիցն էր: Հաղկերտը նպատակ ուներ ան-
ջատել աղվաններին ու վրացիներին հայերից և առանձին-առան-
ձին ստրկացնել նրանց:

Անդրկովկասի ժողովուրդները պատրաստվեցին զենքը ձեռ-
քին դիմադրել այդ ահապոր վտանգին, ինչպես այսօր նրանք
հերոսաբար դիմադրում են հիտլերական ոսմականերին:

Աղվանները մի պատգամավորութուն ուղարկեցին Հայաստան,
որպես դաշնակցի օգնութիւն խնդրելով ընդհանուր թշնամու
դեմ: Դրանից առաջ Հայաստանի, Վրաստանի և Աղվանից երկրի
(ներկայիս Ադրբեջանի) միջև դաշինք էր կնքված Հաղկերտի
նվաճողական քաղաքականութեան դեմ միահամուռ ուժերով պայ-
քարելու համար:

Վարդան Մամիկոնյանը շտապեց օգնելու աղվաններին, ո-
րոնք խիզախորեն մարտնչում էին պարսկական զորքերի դեմ:
Հայկական հեծելազորը Կուր գետի մոտ մեծ ջարդ տվեց օտար
նվաճողներին, որոնցից շատերը խեղդվեցին գետում: Աղվաննե-
րի և վրացիների հետ միացած Վարդան Մամիկոնյանը հալածեց
պարսիկներին և նրանց մոգերին, որոնք եկել էին ժողովրդին
հավատափոխ անելու և ատրուշաններ կառուցելու:

Վարդան զորավարը հասավ մինչև Դերբենդ և բարեկամա-
կան դաշինք կնքեց նաև կովկասյան լեռնականների հետ: Այդ
հնարավորութիւն տվեց նրան երկիրն ապահովելու նաև հյուսի-
սից:

Մինչդեռ Մամիկոնյան զորավարը հյուսիսում զբաղված էր
քաղաքական շատ կարեւոր մի գործով՝ այն է Անդրկովկասի
ժողովուրդների դաշինքն ամրացնելու և ընդհանուր թշնամու
դեմ միահամուռ ճակատ կազմելու գործով, Հայաստանում դա-
վաճան Վասակի կողմնակիցներն օգտվելով Վարդանի բացակա-
յութունից, սկսել էին ավերել երկիրը, կործանել բերդաքա-
ղաքները և ամրոցները, ինչպես՝ Արմավիրը, Արտաշատը, Եր-
վանդակերտը, Գառնին և այլն: Դավաճանների նպատակն էր հող
պատրաստել Հաղկերտի զորքերի ներխուժման համար:

Վարդան Մամիկոնյանը, լսելով երկրում ծայր առած այդ
անկարգութիւնների ու ավերածութիւնների լուրը, իսկուհն
վերադարձավ Հայաստան, երեսուն օրում կտրելով մոտ 800 կի-
լոմետր տարածութիւն:

Դավաճան Վասակի կողմնակիցները հենց որ լսեցին, թե
Վարդանը վերադառնում է, արտափոխար փախան Արարատյան

դաշտից և ապաստանեցին Սյունյաց (այժմյա Զանգեզուրի) լեռները: Սակայն նրանք չազատվեցին հայ ժողովրդի ցասումից: Հայրենասեր զորավարի զորքերը լեռներում չըջապատեցին դավաճաններին և բոլորին անխնա ոչնչացրին:

Վարդանն աշաղիսով կարողացավ վերջ տալ ներքին թշնամուն: Այժմ մնում էր պատրաստվել հակահարված տալու արտաքին թշնամուն:

Վրա հասավ ձմեռը: Վարդանն իր զորքը դասավորեց դանադան վայրերում և հրամայեց կազմ ու պատրաստ լինել դարնան համար:

451 թվի ապրիլի 13-ին, երբ դատկական տոնի առթիվ ժողովուրդը ուրախանում էր և հանդեսներ կատարում, լուր ստացվեց, որ Հաղկերտի բանակը արդեն հասել է Հեր և Զարեփանդ (ներկայիս Խոյ և Սալմաստ) գավառները և սպառնում է ներխուժել Հայաստանի խորքերը:

Այդ ժամանակ հայկական զորքը համալմբված էր Արարատյան դաշտում: Արտաշատում կատարվեց մեծ զորահանդես: Վարդան զորավարը աչքի անցկացրեց կազմ ու պատրաստ բանակը, որին ժողովուրդը ողջունում էր մեծ խանդավառությամբ: Զորավարի առաջին զործն եղավ 2000 հեծյալներից կազմված հետախուզական մի ջրկատ ուղարկել թշնամու զորքի դասավորությունը, նրա ուժերի քանակը պարզելու նպատակով:

Հետախուզական ջրկատը Առանձար Ամատունի քաջ իշխանի հրամանատարությամբ հաջողությամբ կատարեց առաջադրանքը և հարձակվելով թշնամու առաջապահ զորքերի վրա, ջարդեց ու ցիր ու ցան արավ նրանց: Բռնված զերիներից նա խմացավ թըշնամիների ուժերի քանակն ու դասավորությունը և վերադառնալով զեկուցեց Վարդան զորավարին:

Զորավարը մշակեց մի հանդուգն ծրագիր՝ սրընթաց արշավով նետվել թշնամու վրա, ժամանակ չտալով նրան ծավալել իր ուժերը: Նա իր բանակը բաժանեց չորս զորասյուների: Աջ թևի հրամանատար նշանակեց Խորխոռունի Խորեն իշխանին, կենտրոնի երկու զորասյուների հրամանատարությունը հանձնվեց Արծրունյաց իշխանին և Թաթուր Վանանդեցուն, իսկ ձախ թևի հրամանատարությունը սպարապետը վեցրեց իր վրա:

Հեռատես զորավարը մի առանձին ջրկատ հանձնեց իր եղբորը՝ որպես պահեստի ուժ (ոեղերով) թիկունքում մնալու համար:



Պարզանք հայրենական անկման հրապարակումը 1828 թ. հունիսի 1-ին

Չորքը բաղկացած էր աղեղնավորներից, նիզակավորներից և սուսերավորներից, սակայն հիմնական ուժը կազմում էր թեթև ու ծանր հեծելազորը, որը ամբողջովին սպառազինված էր:

Հայկական զորքի ընդհանուր թիվը կազմում էր ընդամենը 66,000, իսկ թշնամու բանակը հասնում էր 300,000-ի: Ահա թե ինչու ռազմագետ հայ զորավարը ծրագրել էր հանկարծակի դրոհով խուճապի մատնել թվական գերակշռություն ունեցող հա-կառակորդին:

Պարսկական բանակը դասավորված էր Ավարայրի դաշտում Տղմուս գետի մյուս ափին: Այդ հակայական բանակի կենտրոնը կազմում էր Հազկերտի թիկնապահ՝ «գլխադեիան», որը կոչվում էր «անմահների դուռը», բաղկացած 10,000 ընտիր հեծյալներից: «Անմահների» կամ «Մատոյան» գնդի երկու կողմերում շարված էին Հնդկաստանից հատկապես բերված փղերը, որպես շարժա-կան ամբողջներ, որոնց մեջքին բարձրացած երկաթե աշտարակ-ներից նետեր էին արձակում պարսից աղեղնավորները:

Այսպիսով հակառակորդի բանակի կենտրոնը խիստ ամրաց-ված էր և նրա հրամանատարությունն իր վրա էր վերցրել Սա-սանյան (այսինքն Հազկերտի) բանակի ընդհանուր հրամանա-տար Մուշկան Նյուսալավուրտը:

Թշնամին ուժեղ էր ու դաժան, Հայաստանի վրա կախված ապառնալիքը՝ ահալոր: Սակայն հայկական զորքը և նրա քա-ջարի հրամանատարը չստանեցին: Դրված էր հայ ժողովրդի դուրսից հարցը: Պե՞տք է պահպաններ նա իր ազգային անկա-խությունը, առաջավոր կուլտուրան, դրականությունը, թե կորցնեն ամեն ինչ, ձուլվելով ու փոշիանալով ասիական բար-բարոսություն մեջ:

Վարդանն ըմբռնում էր այդ ճակատագրական մահու և կե-նաց պայքարի նշանակությունը, ուստի մճռական ճակատամար-տից առաջ խոսքն ուղղելով հայոց զորքին, ասաց.

— Մենք շատ մարտեր ենք մղել միասին, այդ մարտերի մեջ մենք մերթ հաղթող ենք եղել, մերթ պարտված: Սակայն ավե-լի շատ հաղթել ենք, քան պարտվել: Ով որ վախկոտ էր ու փոքրոգի՝ ժողովրդի աչքին դառնում էր ատելի և դառնում էր անարդ մահ, իսկ ով քաջությամբ առաջ էր նետվում, նրա ա-նունը հուշակվում էր ազգի մեջ որպես քաջի: Մենք բոլորս ու-նենք վերքեր ու սպիներ մեր մարմնի վրա որպես քաջության նշաններ:

Ո՛վ իմ քաջ նիզակակիցներ, թեև ձեզանից շատերը դերազանցում են ինձ քաջությամբ, բայց քանի որ ձեր կամքով ու հոգաբարձությամբ ինձ ընտրեցիք ձեզ առաջնորդ ու ղորավար՝ ապա իմ խոսքերը քաղցր և ընդունելի պետք է լինեն թե՛ մեծերիդ թե՛ փոքրերիդ։ Ես կոչ եմ անում ձեզ չվախենալ թշնամիների բազմությունից և ձեր թիկունքը չդարձնեք նրանց սրի առաջ, որովհետև ավելի լավ է պատերազմում մեռնել սուրբ մահով, քան թե վաստակել վախկոտի անուն։ Հաստատուն կացե՛ք, ով քաջեր, երկյուղը թերահավատության նշան է, մենք հեռու ենք վանել մեզնից թերահավատությունը, ուրեմն վախն էլ թող նրա հետ չքանա մեր մտքերից ու խորհուրդներից։

Այսպես լիով իր կրակոտ ճառը Վարդան Մամիկոնյանն սկսեց քաջալերել բոլորին, մոտենալով ռազմիկներին, խոսելով նրանց հետ առանձին-առանձին։ Նա հարց ու փորձ էր անում շատերին նրանց կարիքների մասին։ Ով գենք չուներ, գենք էր տալիս, ով հարմար զրեստ չուներ, հագցնում էր, ով ձի չուներ, ձի էր տալիս։ Հրամայում էր բոլորին առատ պաշար տալ և այդ բոլորը կատարում էր զվարթ ու ժպտուն գեմքով։

Հայրենասեր ղորավարը ղորականների հետ վարվում էր իրեն հալածարների պես, չէր արհամարհում նրանց, բնդհակառակը մտերմությամբ զրուցում էր շարքային ռազմիկներին հետ, վարակում նրանց իր բարձր տրամադրությամբ, հայրենասիրական խանդավառությամբ։



451 թվի հունիսի 2-ն էր։ Դեռ լույսը չբացված ռազմի շեփոնները հնչեցին։ Հայկական ղորքը խանդավառ կանչերով ողջունեց իր ղորավարին, որը հրամայեց գրոհել հակառակորդի վրա։

Երկու բանակները բախվեցին իրար։ Հայկական հեծելազորը անցավ Տղմուտ գետը և խրվեց թշնամու մարտակարգերի մեջ։ Եղիշե պատմադիրն այսպես է նկարագրում այդ կատաղի ճակատամարտը. «Կույի աղաղակն ու շփնդը արձագանք էին տալիս լեռների քարանձավներում։ Շողշողուն սաղավարտների և գրահների փայլը կուրացնում էր մարդկանց։ Մրերի և նիզակների հարվածները փայլատակում էին երկնքի կաթակների նման։ Ո՛վ կարող է պատմել ահավոր ձայների, վահանների և աղեղների խլացուցիչ ձայնությունը, վիրավորների հեծեծանքը, խիզախների գրոհը, վախկոտների լքումը»։

Այս հսկայական իրադրանքման մեջ Վարդան Մամիկոնյանը հանկարծ նկատեց, որ թշնամին գերակշիռ ուժերով նեղում է հայկական դուրքի մի թևը: Նա իր քաջերով նետվեց թշնամու աջ թևի վրա և հետ չպրտեց նրան, քշելով մինչև փղերի շարքերը: Այստեղ, թշնամու բանակի կենտրոնում, ոչնչացնելով հալոսափորդի նահանջող զորամասը, հայ զորավարը այնպիսի սարսափ տարածեց թշնամու վրա, որ «Անմահների գունդը» խուճապի մատնվեց և սկսեց փախչել, կոտորվելով իրենց փղերի և հայ հեծյալների ձիերի տմրակների տակ:

Կայծակի նման ճեղքելով թշնամու խիտ շարքերը, հայրենուսեր քաջերը իրենց սրերով ճանապարհ էին բաց անում: Սաղաթն խորանալով թշնամու մարտակարգների մեջ, Վարդան Մամիկոնյանն էր փոքրաթիվ ջոկատով կտրվել էր իր դուրքի հիմնական մասից: Նա գիմել էր այդ հանդուգն միջոցին, որպեսզի չփոթություն պի թվով գերակշիռ թշնամու բանակի մեջ: Եվ իրոք այդ օրհասական, կառաղի գրոհը հասել էր իր նպատակին: Վարդանը շատ լավ գիտեր, որ խիտ դժվար է կտրել քանակով իրենից մոտ հինգ անգամ ավելի հակառակորդի դեմ:

Հաղկերտի բանակի ընդհանուր հրամանատար Մուշկան Նյուսալավուրտը չփոթված, տեսնելով որ իր բանակի կենտրոնը թուլանում է Վարդանի խիզախ գրոհի հետևանքով, սկսեց խրատել խուճապի մատնված իր զորքերին և փողեր հնչեցնելով բերել ամեն փղերի նոր խմբեր, որոնք շարժական սարքների դեք էին կատարում:

Վարդան զորավարը հերոսաբար շարունակում էր անհավատար ականջարը: Հայերի նիզակներից վիրավորված փղերը կատաղեցին և սկսեցին իրենց ոտների տակ տրորել սեփական զորքերին: Սաղաթն թշնամին չորս կողմից արդեն պաշարել էր Վարդանին և նրա փոքրաթիվ խիզախ գինակիցներին: Հայրենասերները չստանալից այդ ահալոր կացության մեջ: Վարդան Մամիկոնյանը վճռել էր ո՛չ նահանջել, ո՛չ էլ անճանաչու լինել, այլ կտրել մինչև վերջին շունչը և որքան հնարավոր է մեծ թվով թշնամիներ ոչնչացնել: Ինչպես պատմում է Նղիշն պատմագիրը «Հերոս Վարդանը իր քաջարի ընկերների հետ այդ տեղ մի ահռելի ջարդ ամեն թշնամուն և ինքն էլ ընկավ ուղղադաշտում»:

Ճակատամարտը շարունակվում էր, մինչդեռ վրա էր հասնում գիշերը: Դիակները կույտեր էին բարձրանում երկու կող-

ժից: Թշնամու բանակի մեջ չփոթություն էր ընկել: Չնայած
արա թվական գերակշռության, հայերը շարունակում էին մար-
տը և մինչև մութն ընկնելը շատ թշնամիների սպանեցին:

Հայկական դորքը, համեմատաբար քիչ կորուստներ տալով և
պահելով իր ռազմական ուժը, նահանջեց, շարունակելով մար-
տերը: Հայերի այս նահանջը վախեցրեց պարսից հրամանատա-
րին, որովհետև նա կասկածում էր, թե հայերը հանկարծակի
հետ դառնալով, կարող են ծանր հարվածներ հասցնել իր զոր-
քին: Թշնամիները փորձել էին հայրենիքի պաշտպանների ուժը,
դրա համար էլ զգուշանում էին նրանից: Եվ իրոք, և՛ թե քաջ
Վարդան Մամիկոնյանը անձնվիրաբար չզոհեր իր կյանքը և
մնար իր զորքի գլուխ, ղեկավարելով ընդհանուր ճակատամար-
տը, թերևս պարսկական բանակը ավելի մեծ պարտություն
կրեր:

Փաստորեն հայկական զորքը չէր պարտվել, այլ նահանջել
էր, զրկվելով իր քաջարի զորավարից: Վարդան Մամիկոնյանը,
հայրենասիրական խանդավառությունից մղված, նետվել էր
մարտի ամենավտանգավոր տեղը և անկասկած կատարել էր
դյուցազնական գործ: Նա չէր մտածել իր անձի մասին, երբ
տեսել էր իր զորքին սպառնացող մեծ վտանգը: Իր հերոսական
մահով նա փրկել էր հազարավոր մարդկանց կյանքը: Դիտակ-
ցաբար նա զոհել էր իր կյանքը հայրենիքի ազատության հա-
մար:

Թշնամին զգաց, որ անհնար է բռնությամբ խլել այն ժողո-
վրդի ազատությունը, որը վճռել է ապրել անկախ ու ազատ:

Ավարայրի ճակատամարտը հայ ժողովրդի համար հսկայա-
կան նշանակություն ունեցավ: Դա ազատագրական, արդարացի
ժի պատերազմ էր օտարերկրյա հափշտակիչների դեմ, որոնք
ուզում էին ստրկացնել հայ ժողովուրդը, ոտքի տակ տալ նրա
ազատությունը, նրա լեզուն, կույտուբան: Հայ ժողովրդի ինք-
նուրույն դոյության հարցն էր դրված, որը պետք է վճռվեր Ա-
վարայրի ճակատամարտում: Վարդան Մամիկոնյանը հայրենիքի
պաշտպանների գլուխն անցած անձնազոհ և քաջարի կերպով
լուծեց այդ հարցը հայ ժողովրդի դոյության օգտին: Իր և զի-
նակիցների մահով նա պաշտպանեց հայրենիքի ազատությունը,
հայ ժողովրդի դոյությունը: Նա փոքրիկ կերպով չնահանջեց
թշնամիների բազմության առաջ: Այդ կլինե՞ր ճակատագրական
ժի պարտություն: Ընդհակառակը, փոքրաթիվ ուժերով Վար-

դանը գրոհեց թշնամու վրա, որը գոռոզացել էր ու իրեն համարում էր անպարտելի:

Հայրենասերների համառությունը, տոկունությունը և վրձնականությունը կոտրեցին թշնամու դերակշռությունը և գոռոզությունը: Հաղկերտը զգաց հայերի ուժը և հրաժարվեց իր նվաճողական ծրագիրներից: Հայ ժողովուրդը պահպանեց իր ազատությունն, իր լեզուն, գրականությունը, իր կույրոտւան, որովհետև նա արյուն թափեց իր հոգեկան գանձերը, իր սրբազան իրավունքները պաշտպանելու համար:

Քաջ Վարդանի և իր խելախ զինակիցների հերոսական մահը դարձավ հայ ժողովրդի պատմության ամենահերոսական, անմուռանալի էջերից մեկը:

Դարեր են անցել, սակայն դեռևս չի թառամել այդ քաջերի փառապսակը: Կանցնեն էլի դարեր և հայ ժողովուրդը կհիշի Վարդան Մամիկոնյանին և նրա հետ միասին հայրենիքի ազատության համար զոհված քաջերին:

Վարդանի եղբայր Հմայակ Մամիկոնյանը, իր շուրջը հավաքելով հայկական զորքը և ղինված ժողովրդի ջոկատները, ամրանալով Պարխար լեռներում, անդադար հարձակումներ էր գործում Հաղկերտի զորքերի վրա:

Տայոց գավառի Ուրջահաղ գյուղի մոտ տեղի ունեցավ մի նոր վճռական ճակատամարտ հայերի ու օտար նվաճողների միջև: Այս ճակատամարտում թշնամիները ջախջախիչ հարված ստացան և ստիպվեցին հեռանալ Հայաստանից: Մարտում հերոսաբար ընկավ Հմայակ Մամիկոնյանը, տառնադատիկ լուծելով իր քաջարի եղբոր Վարդան Մամիկոնյանի մահվան վրեժը: Այդ ճակատամարտից հետո Հայաստանը բավական երկար ժամանակ ազատվեց արտաքին թշնամու հարձակումներից:

ՎՍՅԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ



ըջնահաղի ճակատամարտում հերոսա-
բար ընկած Հմայակ Մամիկոնյանի որդին
էր Վահանը, քաջ Վարդան Մամիկոնյանի
եղբոր որդին։ Դավաճան Վասակ Սյունին 451 թվին Վահանին և
նրա երկու եղբայրներին որպես պատանդ ուղարկել էր Պարս-
կաստան Հազկերտի արքունիքը։ Գուգարաց բռնչիւն՝ վրաց Աշուշա
իշխանը, որը Մամիկոնյաններին մոտիկ ազդակաւն էր, թանկա-
զին ընծաներ տանելով Հազկերտի պալատականներին կարողա-
ցավ կաշառել նրանց և գերությունից ազատել Հմայակի որդի-
ներին և հանձնել իրենց մօրը Զուիկին։ Երեսնաները մեծացան
Յուրտավի արքունիքում իրենց խելացի մօր խնամակալության
տակ, վայելելով Աշուշա իշխանի հովանավորութեանը։

Այագ եղբայրը՝ Վահանը պատանի հասակից աչքի էր ընկ-
նում իր ուշիմությամբ, համարձակությամբ, միաժամանակ և
զգուշ և չըջնահայաց ընտելությամբ։ Երբ նա չափահաս դար-
ձավ բոլորին դարմացրեց իր սուր մտքով, մարդկանց ճանաչելու
ընդունակությամբ և արտակարգ ուժեղ կամքով։ Ռազմական
վարժությունների մեջ նա միշտ առաջին տեղն էր բռնում, և
իրեն ցույց էր տալիս ոչ միայն որպես հմուտ և քաջ ռազմիկ,
այլ և որպես ռազմական տաղանդավոր ղեկավար։

Այդ ժամանակ արդեն մեռած էր դաժան Հազկերտ II-ը, և
նրան հաջորդել էր ոչ պակաս դաժան Պերոզը (459—483)։ Սա-
կայն Պերոզը փորձում էր ստրկացնել Հայաստանն ասիւլի խո-
րամանկ միջոցներով։ Նա նույնպես չէր հրաժարվել հայերին
հավատարմիս անելու մտքից, որպեսզի կրակապաշտությունը
առարածելով Հայաստանում կարողանա վերջնականապես ոչնչաց-
նել այդ երկրի ինքնուրույնությունը և անկախությունը։

Պերոզն սկսեց կաշառել իշխաններին, տալով նրանց պաշտոններ և արտոնություններ, գրգռելով մեկը մյուսի դեմ: Այսպիսով նա ուզում էր պառակտել երկիրը և թուլացնել նրա ուժերը: Մի քանի դավաճան իշխաններ, փառասիրությունից մղված ուրանալով իրենց հայտառ, օգնում էին Պերոզ թագավորին իր դիվական ծրագիրներն իրագործելու համար: Նրանք գրգռում էին Պերոզին Վահանի դեմ, ասելով, թե նա արդեն մեծանալով պատրաստվում է պատերազմ մղել պարսից դեմ, լուծել իր հոր և հորեղբոր՝ Վարդան Մամիկոնյանի մահվան վրեժը:

Հայրենիքին հավատարիմ մնացած հայ իշխանները համախմբվեցին Վահանի շուրջը, որն իբրև Մամիկոնյանի տոհմի անդրանիկ ժառանգ, պետք է իր վրա վերցնեի հայկական գործի ընդհանուր հրամանատարությունը:


Վահանը, լսելով նախանձոտ իշխանների դավերի մասին, զգաց հայրենիքին սպառնացող մեծ վտանգը: Նա գիտեր, որ իր ուժերը դուռնա թույլ են, հարկավոր է ժամանակ չահել, քննողնել Պերոզին, առերես հավատարմություն ցույց տալով նրան:

Դրա համար էլ նա մեկնեց Պարսկաստանի մայրաքաղաքը, Տիրքոն, իր հետ տանելով թանկարժեք ընծաներ՝ ոսկի և արծաթ: Հետո նա առերես կրակապաշտություն ընդունեց, որպեսզի վերջնականապես համոզի Պերոզին, թե ինքը ոչ մի թշնամական ծրագիր չունի նրա դեմ: Եվ Վահանը հասավ իր նպատակին: Պերոզը հավատաց հեռառես և իմաստուն Մամիկոնյանին, որը վերադարձավ Հայաստան և դադարաբար շարունակեց կադմակերպել հայրենիքի ազատագրության գործը:

Այդ ժամանակ վրաստանի Վախտանգ թագավորը ապստամբություն բարձրացրեց Պարսկաստանի դեմ: Վրաց ժողովուրդը չկարողանալով տանել Պերոզի կողմից հարուցված հալածանքները, ոտքի ելավ և դուրս քշեց իր երկրից օտար նվաճողներին:

Դա հարմար առիթ էր ընդհանուր թշնամու դեմ ոտքի ելնելու համար: Հայ իշխաններն առաջարկեցին Վահանին միանալ այդ ապստամբական շարժմանը:

Խորապետ և զգուշ Վահանը ցանկացավ փորձել իշխանների հավատարմությունը: Նա դումարեց մի ժողով, որտեղ իշխանները հանդես գալով, ասացին. «Մեր հայրենիքի փրկության



Վահագն Մամիկոնյանը նեղֆոս և բռնաբազուկ օղակը

համար սրանից ավելի հարմար առիթ չկա: Վրաց Վախտանգ Թագավորը քաջ մարդ է, միանալով վրացիներին հետ, մենք կարող ենք դիմադրել պարսիկներին»:

Բայց Վահանը չչտապեց: Նա ցանկանում էր լրջորեն կշռադատել դրուժյունը, որովհետև գիտեր, որ մի անխոհեմ քայլ կարող է տապալել հայրենիքի աղատագրության դործը: Վահանին տանջում էր այն միտքը, որ ինքը, թեև առերես, ուրացել է իր հավատը, և որ շատերը նրան համարում են Հայաստանի թշնամիների կողմնակից: Նա ուզում էր վստահ լինել, թե արդյոք իրենց շարքերում դավաճաններ չկան, որոնք կարող էին վիժեցնել դործը: Մյուս կողմից, նա գիտեր, որ թշնամին ուժեղ է, իսկ հույներից օգնություն սպասել անօգուտ է: Հայ նախաժողովուրդի համապատասխան նրան, որ իրենք հույսը դրել են դժբախտության իրենց ուժերի վրա և գերադասում են մեռնել, քան թե ապրել որպես ստրուկ:

Վահանը համոզվեց, որ իշխանները իրոք վճռել են ազատվել օտարերկրյա ճնշումից, սակայն ավելի հաստատ համոզվելու համար, առաջարկեց հանդիսավոր կերպով երգվել ավետարանի վրա, որ նրանք մինչև վերջին շունչը հավատարիմ կմնան հայրենիքի աղատագրության դործին: Ամենից առաջ ինքը Վահանը հանդիսավոր երգում ավեց, ձեռքը դնելով ավետարանի վրա, այնուհետև մոտեցան մյուս իշխանները և երգվեցին չդավաճանել հայրենիքին:

Սակայն իշխանների մեջ գտնվեց Վարդգեսյան անունով մի դավաճան, որը ժողովից դուրս գալով չտապեց պարսից մարդպանի (Հայաստանն այն ժամանակ կառավարվում էր մարդպաններով) մոտ և հայտնեց նրան հայ իշխանների վճիռը՝ Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ օտար նվաճողների դեմ ազատագրական պատերազմ մղելու մասին:

Մարդպանը և նրա հետ միասին դավաճան իշխանները սարսափով լսեցին այդ լուրը և փախան, ապաստանեցին Արտաշատի ամրոցում: Հայ իշխանները պաշարեցին ամրոցը, սակայն մարդպանն իր համախոհներով կարողացավ գիշերով փախչել Պարսկաստան: Այստեղ հավաքելով իր զորքերը, մարդպանը վերադարձավ գեպի Հայաստանի սահմանները: Նա վճռել էր վերջ տալ ապստամբությանը:

Հարկական զորքը փոքրաթիվ էր, ընդամենը չորս հարյուր հոգի: Սակայն նա ողենջնջված էր հայրենիքի աղատագրման դա-

դաժարով: Պարսկական յոթ հաղարանոց բանակը առաջ էր շարժվում: Ակոռի դյուղի մոտ տեղի ունեցավ ընդհարումը: Հայրենասերները փոքրաթիվ դուռնով, խիզախորեն դուռնեց թըռնամինների վրա: Ճակատամարտը կարճ տևեց: Հակառակորդը չգիմացավ հայերի սրընթաց զորհին և խուճապի մատնվելով ցրուցան եղավ:

Դվինում կազմված էր հայկական նոր կառավարութուն: Սահակ Բաղրատունի իշխանն ընտրվեց Հայաստանի մարզպան, իսկ Վահան Մամիկոնյանը մնաց որպես սպարապետ: Նա պատգամավորներ ուղարկեց Հայաստանի բոլոր կողմերը, կոչ անելով բոլորին գնեք վերցնել և պաշտպանել հայրենիքը. «Հասել է ժամը,—ասում էր Վահանը,—որ մեզնից յուրաքանչյուրը իրենից դեն պիտի չպրտի վախկոտությունը և թուլությունը և գնեք վերցնելով պաշտպանի իր հայրենիքն ու հավատը: Ով վախենում է մահից, նա արժանի չէ փրկության, այլ դատապարտված է գոթիքի»:

Զմեռն անցավ: Պարսկական մի նոր բանակ շարժվեց դեպի Հեր և Զարեանդ գավառները: Վահան Մամիկոնյանը, հավաքելով հայկական զորքը, չտապեց թշնամուն ընդառաջ, նպատակ ունենալով թույլ չտալ հակառակորդին՝ մտնելու Հայաստանի խորքերը:

Մեկնելով Դվինից, մի քանի օրում նա հասավ Արտազ գավառը, Ներսեհապատ դյուղի մոտ: Հակառակորդի զորքը մոտենում էր: Վահանը, ինչպես միշտ, այս անգամ էլ վճռեց նախահարձակ լինել: Նա հրամայեց հայկական զորքին միաժամանակ սկսել գրոհը: Սակայն միջին և աջ թևերն ուշացան, իսկ թըռնամին օգտվելով դրանից, ինքն անցավ հարձակման: Մի պահ չփոթություն տիրեց հայկական զորքի շարքերում: Վահանը տեսնելով այդ, մի վայրկյան անգամ չտատանվեց, այլ իր հրամանատարության տակեղող զորադնդով հարվածեց թշնամու ձախ թևին: Գրոհն այնքան սաստիկ էր, որ հակառակորդի այդ թևը նահանջեց, թողնելով կենտրոնն անպաշտպան վիճակում:

Հայ զորավարը իր հարձակումն ուղղեց հակառակորդի կենտրոնի վրա: Ռազմադաշտը ծածկվեց թշնամու դիակներով: Հայկական զորքը սիրտ առնելով այդ հաջողությունից, սկսեց հալածել նահանջող հակառակորդին: Հաղթանակը կատարյալ էր: Զախճախված էր Պերոյի այդ բանակը, սակայն աղատադրական պատերազմը դեռ չէր վերջացել:

Պերոզը փորձեց հյուսիսից հարձակվել հայերի վրա: Պարսից Միհրան զորավարը, դրավելով Կուր գետի հովիտը, սկսել էր առաջ շարժվել: Վահան Մամիկոնյանը իր զորքի մի մասով շտապեց այնտեղ և վրացիների հետ միասին դիմադրեց օտարերկրյա հափշտակիչներին:

Սակայն այս ճակատամարտում հայկական զորքն անհաջողութուն կրեց հակառակորդի ղեկավարող ուժերի առաջ:

Չնայած Վահանի այս անհաջողության, հակառակորդը չհամարձակեց շարունակել իր հարձակումը, որովհետև մեծ կորուստներ էր կրել և վախենում էր Վահանի ուժից: Պարսից Միհրան զորավարը առաջարկեց Վահանին խաղաղության բանակցություններ սկսել, սլաքմանով որ հայերը վայր դնեն զենքը: Վահանը արհամարհանքով մերժեց այդ առաջարկը:

Վրա հասավ ձմեռը: Պերոզ արքան չէր մոռացել իր բանակների պարտությունը: Գարունը բացվելուն պես նա մի հսկայական բանակ շարժեց դեպի Հայաստան՝ Զարմիր Հաղարավուտի հրամանատարությունով:

Թշնամիները անցան Արաքս գետը և պաշարեցին Դվին քաղաքը: Վահանի զրույթունը ծանր էր: Նրա զորքը երկու մասի բաժանված լինելով, խիստ փոքրաթիվ էր: Զորքի մի մասը Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ դտնվում էր Վրաստանում:

Որպես հմուտ ռազմադեմ՝ Վահանը գիտեր, որ անհնար է պարտության մատնել այդպիսի հսկայական մի բանակ, ուստի նա դիմեց իր սիրած ռազմական տակտիկային, որին միանում էր խիզախ հանդգնությունը: Փոքրաթիվ զորքով Դվինը պաշտպանել խիստ դժվար էր: Վահանը չցանկացավ քաղաքի աղղաբնակչությունը ենթարկել պաշարման և կոտորածի վտանգին: Նա իր հեծյալ ջոկատով դուրս եկավ քաղաքի պարիսպներից և հանկարծակի նետվելով թշնամիների վրա մի քանի տեղով ճեղքեց նրանց շարքերը: Սարսափահար թշնամին տեղի տվեց այդ հանդուգն գրոհի առաջ և Վահանն իր քաջերով ապաստանեց Հայաստանի անմատչելի լեռներում: Այս անգամ էլ դաշտը ծածկելուց հակառակորդի ղեկավարում: Վահանն էլ ունեցավ մարդկային կորուստներ, որոնց թվում Դիմաքոյան և Մահառունի իշխանները:

Նույն օրը Երեկոյան Վրաստանից հասավ Մուշեղ Մամիկոնյանն իր հեծելազորով, բայց նա ուշացել էր: Նա չկարողացավ

մասնակցել կուլին, այլ իր զորքով զնաց միանալու փախստա-
կաններին:

Թշնամու բանակի ընդհանուր հրամանատար Հաղարավուի-
տը, կատաղած այդ անհաջողությունից, հրամայեց իր զորքե-
րին հետապնդել Վահանին, ավերելով ու հրի և սրի մատնելով
երկիրը:

Սակայն այդ ժամանակ նա Պերոզից հրաման ստացավ նո-
րից արշավել Վրաստանի վրա, իսկ նրա փոխարեն զորքի հրա-
մանատար նշանակվեց Շապուհը:

Շապուհը շարունակեց հետապնդել Վահանին, որն անորսալի
էր: Հանկարծակի հարձակումներով հայ զորավարը թուլացնում
էր հակառակորդի բանակը, ոչ մի օր հանդիստ չտալով նրան:
Նա գիտեր, որ իր փոքրաթիվ զորքով ճակատ առ ճակատ չէր
կարող պատերազմ մղել օտար նվաճողների դեմ, դրա համար
էլ նա ընտրել էր դիչերով, գաղափի և անսպասելի զրոհների
տակտիկան:

Հակառակորդը, վստահ լինելով իր դերակշռող ուժերի վրա,
սկզբում չէր սպասում նման հարձակումների, ուստի անհող և
հանդիստ տարածվում էր ամբողջ երկրում: Վահանը թողնում
էր, որ Թշնամու ուժերը ծավալվեն, հետո անսպասելի կերպով
հարձակվում էր այս կամ այն կետում, ջլառում և ջախջախում
հակառակորդի առանձին ջոկատները:

Լուր ստանալով, որ Վահանն իր հեծյալներով գտնվում է
այսինչ գյուղում կամ ավանում, Թշնամիները մեծ ուժերով
գնում էին նրան բռնելու: Սակայն այդ ժամանակ Վահանը հա-
կառակ կողմից կայծակի արագությամբ զրոհում էր Թշնամու մի
թևի վրա, ջարդում և խկույն անհետանում:

Գիչերով, երբ Շապուհն բանակը հանդիստ քնած էր, հան-
կարծ չիոթ և իրարանցում էր ընկնում զորքի մեջ: Կարկուտի
նման նետերը թափվում էին ամեն կողմից: Թշնամիները սար-
սափահար վեր էին թռչում և խավարի ու իրարանցման մեջ
սկսում էին կոտորել միմյանց: Իսկ Վահանի քաջերն անմատչե-
լի բարձունքներից շարունակում էին նետերի տարափ տեղալ
խուճապի մատնված Թշնամիների դլինին:

Վահանի այս հանկարծական հարձակումները շատերին
թվում էին դերբնական ուժի տեր մարդու գործ: Նրա մասին
առասպելներ էին պատմում, որոնք էլ ավելի սարսափեցնում
էին Թշնամիներին: Պարսից ընդհանուր հրամանատար Շապուհն

անդամ հավատում էր, որ Վահանի մարդկանց կողքին ինչ-որ անտեսանելի զորություն է կռվում և պաշտպանում նրանց:

Մի անգամ Վահանը իր քաջերով Երեզ ավանումն էր: Լսելով այդ, թշնամիներն շտապեցին ափսոն: Նրանց հետ էր նաև հայ դավաճան իշխան Գլխհոն Սյունին: Սա դիմելով Շապուհին ասաց. «Դուք և ամբողջ աշխարհն իմացաք, թե ինչ քաջության տեր է Վահանը: Եթե Դիլինում նա բավականաչափ զորք ունենար, մեզ բոլորիս կոչնչացներ: Բայց բարերախոտարար մենք ազատվեցինք: Այժմ անհրաժեշտ է ոչ մի բոլակ հանգիստ չթողնել այդ մարդուն, ինձ հանձնեցեք այդ զործը, ես հինգ օրում վերջ կտամ Վահանին և իր մարդկանց»:

Այդ մի գիշերը հայկական զորքը անցկացրեց խաղաղ քնով: Առավոտյան հետախույզները Վահանին հայտնեցին, որ թշնամիների զորքը մոտենում է: Վահանի ուժերը փոքրաթիվ էին, դրա համար էլ նա հավաքեց Երեզի դյուղացիներին և սկսեց բացատրել նրանց կռվի ձևերը: Գյուղացիները լսում էին նրան մեծ ուշադրությամբ և հարգանքով: Վահանը զենքեր բաժանեց դյուղացիներին, տալով նրանց վահաններ և նիզակներ: Այսպիսով նրա զորադուռը բաղմացավ:

Դասավորելով իր զորքը մարտական կարգերով, Վահան Մամիկոնյանը, իր սովորության պես, չսպասեց, որ թշնամին մոտենա, այլ ինքը առաջ շարժվեց և հանկարծակի գրոհեց հակառկորդի վրա, նախ նետերի տարափ տեղալով, որ անձրևի նման թափվեց Շապուհի զորքերի գլխին:

Այս հանկարծակի գրոհը ահ ու սարսափ տարածեց թշնամիների վրա, որոնք խուճապի մատնվելով սկսեցին կոխտուել միմյանց և փախչել:

Հայերի կորուստները համեմատաբար չատ քիչ էին: Մարտում ծանր վերք ստացավ Գարեղենյան իշխանը, որը կռվել էր քաջարի կերպով և մի քանի օրից մահացավ:

Երեզի մոտ տարված հաղթանակից հետո՝ Վահանն անցավ Շտե ավանը: Նրա զորքը խիստ հոգնել էր գիշերվա ճակատամարտից հետո, իսկ թշնամին բաղմաթիվ էր և չարունակ հետապնդում էր, որպեսզի ոչ մի բոլակ հանգիստ չտա նրան:

Վահանը ցանկանում էր գոնե մինչև լույս մի փոքր հանգստանալ, բայց հենց որ լույսը քաղվեց նա տեսավ Շապուհի զորքերին, որոնք կատաղած իրենց անհաջողություններից, առաջ էին շարժվում մեծ թափով:

Դաջ զորավարը չվհատուեց: Նա հալածեց իր մարդկանց, որոնց թիվը հազիվ մի քանի հարյուրի էր հասնում, և առաջ նրանց. «Երկու ճանապարհ կա աղնիվ մարդու առաջ. կամ փառքով ապրել կամ փառքով թեոնել: Մինչև այսօր մենք միշտ հաղթող ենք եղել, և նորից կհաղթենք, եթե չվախենանք մահից: Բայց ավելի լավ է փառքով թեոնել, քան ապրել անփառունակ սարուկի կյանքով»:

Սա էր նրա ճառի իմաստը:

Մինչ այդ թշնամիներն առաջ էին շարժվում մարտական շարքերով: Վահանի ղինվորներից մի քանիսը տեսնելով Շապուհի զորքերի բազմությունը, հուսալքվեցին և սկսեցին փախչել փոքրիկի կերպով: Սակայն դավաճանների այդ ստոր վարժուհիները չսասանեց մնացածներին, որոնք ավելի սեղմ համախմբվեցին Վահանի շուրջը: Այդ քաջերի մեջ էին Մուշեղ Մամիկոնյանը, Կոնստանտին երեք եղբայրները և մի քանի այլ իշխաններ:

Հայրենասեր քաջերի համար ուրիշ ճանապարհ չկար: Նրանք զերադասում էին մահը, քան անարդ գերությունը, ուստի վրձուեցին ընդունել մարտը, անհավասար, օրհասական մարտը թվով ասանապատիկ գերակշռող հակառակորդի դեմ:

Վահան Մամիկոնյանը երեսը խաչակիցեց, մոնչաց առյուծի նման, ինչպես դրում է Մ դարի հայ պատմագիր Ղազար Փարպեցին, և իր մի բուռը քաջերով նետվեց թշնամիների վրա: Զինակիցներից մեկը, տեսնելով, որ զորավարը նետվում է մարտի ամենավտանգավոր տեղը, զգուշացրեց նրան ասելով.

— Զգուշ եղ, իշխան, անձդ պահպանիր:

— Այլևս զգուշ մնալու ժամանակ չէ, — պատասխանեց Վահանը դառն քմծիծաղով: Նա շատ լավ գիտեր, որ դա մահու և կենաց պայքար է, որտեղ հաջողություն կարող է ունենալ մի միայն անսահման խիզախությունը և հանդգնությունը: Այս անգամ էլ բախտը ժպտաց Վահանին:

Նա ամենի հեղեղի նման ճեղքեց թշնամիների շարքերը, իր փոքրաթիվ ղինակիցներով, ինչպես առյուծ անցավ նրանց միջով, դրոճ է Ղազար Փարպեցին, կոտորելով թշնամիներից շատերին:

Այդ կովում ստացած մահացու վերքից անարդ մահով մեռավ նաև հայրենիքի դավաճան Գրիգորը, որը մի քանի օր առաջ պարծեցել էր, թե Վահանին և նրա զորքերին միայն իր նետի կոթով կցրի: Պարծենկոտ Գրիգորն ուներ թանձր և ամ-

բակուռ պրահ, որի մեջ ինքն իրեն համարում էր անխոցելի։ Սակայն քաջ հայրենասերի նիզակը ծակեց դավաճանի անութը։ (Թևի տակը) և Թաիանցեց մինչև լյարդը։

Վահանին բռնելու բոլոր հույսերը ապարդյուն էին։ Շապուհի բանակը գնալով հալչում էր մի բուռը հայրենասերների անակնկալ հարվածների տակ, ուժասպառ և արյունաքամ լինելով։

Վահան Մամիկոնյանի կիրառած գործելակերպը, տակտիկան, ըստ էության կարելի էր անվանել պարտիզանական մարտերի տակտիկա։ Այդ միջոցով նա կարողացավ փոքրաթիվ ուժերով կարճ ժամանակում քայքայել թշնամու հսկայական բանակը, ահ ու սարսափ տարածելով նրա վրա։ Պարսից ընդհանուր հրամանատարը կորցրել էր գլուխը, չգիտեր ինչ անել։

Այդ ժամանակ լուր ստացվեց, որ պարսից Պերոզ արքան սպանվել է քուչանների դեմ մղված պատերազմում։ Նրան հաջորդել էր նրա եղբայրը՝ Վաղարշը։

Վաղարշ Թադավորը փոխեց իր քաղաքականությունը Հայաստանի հանդեպ։ Նա Վահանի մոտ ուղարկեց իր իշխաններից մեկին՝ Նիխոր անունով, և առաջարկեց հաշտության բանակցություններ սկսել։ Նա հասկացել էր, որ չի կարելի բռնի ուժով սարկացնել այն ժողովուրդը, որ վճռել է ամլելի շուտ մեռնել, քան վիզը ծռել թշնամու առաջ, և արիաբար կռվում է իր ազատության համար։

484 Թվի դարձանը Նիխոր իշխանը իր չբախմբով և փոքրաթիվ զորքով հասավ Հայաստանի սահմանների մոտ և համարձակվելով մտնել երկրի խորքերը, կանգ առավ Նվարսակ գյուղի մոտ։

Վահանը դիմավորեց պարսից պատգամավորներին, հրամայելով հնչեցնել փողերը և պարզել հայկական դրոշները։ Հաջորդաբար իր սպառազինված չբախմբով մտավ Նիխորի բանակատեղը։ Նիխորի մարդիկ սարսափեցին, նրանք կարծում էին, թե Վահանը եկել է ոչ թե խաղաղության բանակցությունների, այլ դավադրաբար իրենց վրա հարձակվելու։

Նիխորը սուրհանդակ ուղարկեց Վահանի մոտ և հայտնեց, որ ինքը զարմացել է նրա վարմունքից, որովհետև դա հակառակ է պարսից սովորություններին։ Միայն արքայից արքայի աշխնքն Պերոզի զորքի ընդհանուր հրամանատարն իրավունք

առնել պարսկական բանակ մտնել պատերազմական փողեր հնչեց-
նելով, և ուրիշ ոչ ոք:

Վահանը հպարտությամբ պատասխանեց Նիխորին:

— Նախ դու ինձ արքայից արքայի հպատակը դարձրու, հե-
տա խոսիր պարսից սովորությունների մասին, որոնց ես լավ
ծանոթ եմ:

Նիխորը հարկադրված էր լռել: Ահա մեցին խաղաղության
բանակցությունները: Վահան Մամիկոնյանն առաջարկեց իբ-
րաջամանները: Այդ պայմաններից գլխավորները երեք էին: Առա-
ջին պայմանն այն էր, որ արքայից արքան չպետք է հալածե-
ր թափառողները Հայաստանում և ոչ ոքի չպետք է բռնադա-
տեր ընդունելու կրակապաշտությունը: Երկրորդ՝ հայրենիքի
դավաճանները և ուրացողները չպետք է պատիվ ու պաշտոն
առնան պարսից արքայի կողմից, և երրորդ՝ անարժան և սրկ-
կա և կաշառակեր մարդիկ պետք է հեռացվեն պաշտոններից և
ներանց փոխարեն նշանակվեն աղյնիվ, արժանավոր մարդիկ:

Խաղաղության պայմանների հիմնական էությունն այն էր,
որ հայ ժողովուրդը պետք է պահպաներ իր ազգային ինքնու-
շույնությունը, հավատը, լեզուն, իր կուլտուրան, այն ամենը,
ինչ կազմում էր նրա անկախության հիմքը:

Նիխորն ստիպված էր ընդունել Վահանի առաջարկած պայ-
մանները, որովհետև ուրիշ ելք չուներ: Բազմաթիվ մարտերի
հորձը ցույց էր տվել, որ Վահան Մամիկոնյանը կարող է նա-
խադրել հարվածներ հասցնել պարսից բանակին և պարտության
ենթարկել նրան:

Բանակցությունների ժամանակ Վահանը խոսում էր խրոխա,
հաղթական ղորավարի վճռականությամբ և իր սովորական պեր-
ճախոսությամբ, որը հիացնում էր բոլորին: Նա զգում էր, որ
իր դործն արդարացի է, որ հայ ժողովուրդը չի ձգտում սուր-
կացնելու ուրիշ ժողովուրդներին, այլ ընդհակառակը, պայքա-
րում է իր ազատության համար, պաշտպանում է իր սրբազան
օջախը, իր հայրենիքը:

Իր ճառը վերջացնելով Վահանն առաջ Նիխորի պատգամա-
վորներին.

— Եթե այս պայմաններն ընդունում եք, ապա մենք կհաշա-
վենք ձեզ հետ, իսկ եթե չընդունեք, ապա պատրաստ ենք մին-
չև վերջին շունչը կռվելու և ավելի ուրախությամբ կմեռնենք,
քան գլուխ կծոնեք ճշողների առաջ:

Նիխորն ընդունեց Վահանի պայմանները և կնքեց Նվաթ-
սակի հռչակովոր դաշնագիրը, որը ազահովում էր հայ ժողո-
վրդի ազգային ինքնուրույնությունը, խղճի և դավանանքի ա-
զատությունը ու երկարատև խաղաղությունը:

Ժողովրդի մղած հերոսական պայքարը պակսեց հաղթանա-
կով:

Մամիկոնյան խորագետ, չրվահայաց, սակայն և հանդուգն
ու վճռական զորավարը հռչակեց ժողովրդի ազատարար: Դվին
մայրաքաղաքում կատարվեցին ժողովրդական մեծ հանդեսներ և
տոնակատարութիւն: Ազգաբնակչության բոլոր խավերը՝ նախա-
քարները, աղնվականները, ռամիկները, քաղաքացիները, գյու-
ղացիները, կանայք, հարսները, երեսաններն ու ծերերը ողջու-
նում էին հայրենասեր զորավարին: Մայր եկեղեցում կատաբ-
վում էր դոհաբանական մաղթանք, փողոցները և հրապարակնե-
րը ծայրե ի ծայր լիքն էին:

«Մեծ ուրախության և ցնծության օր էր այդ աղնիվ ու
հայրենասեր մարդկանց համար, և սուգի ու տխրության օր
անաղնիվ ու չար մարդկանց, դավաճանների համար», — գրում է
Ղազար Փարպեցին:

Վահան Մամիկոնյանին հանձնվեց երկրի իշխանության դե-
կը, և նա երկար տարիների ընթացքում, մինչև իր մահը, 510
թվին, իմաստությամբ կառավարեց Հայաստանը, ապահովելով
նրան արտաքին թշնամիների հարձակումներից:

Վահանը եղավ իր մեծ հորեղբոր քաջ Վարդան Մամիկո-
նյանի արժանի ժառանգը և հայրենիքի ամենազոհ պաշտպանը:

ՎԱՆՐԱՄ ՊԱՅԼԱՎՈՒՆԻ



այ ժողովուրդը հինգերորդ դարի ազատագրական մեծ պատերազմից հետո շարունակեց հերոսական պայքար մղել օտար նվաճողների դեմ: Ավուրայրի ճակատամարտը, Վահան Մամիկոնյանի և հաջորդների պայքարը ցույց տվեց, որ հայ ժողովուրդը վճռել է իր արյան դնով պաշտպանել իր ազգային դոյությունը, իր կուլտուրան, լեզուն և գրականությունը:

Դրդ դարում մի նոր աղետ հասավ հայ ժողովրդին: Դա արաբների ահալոր արշավանքն էր, որը հեղեղի նման դալիս էր հարավից և կարճ ժամանակում տարածվեց Ասիայում, իրեն ենթարկելով այնպիսի խոշոր երկրներ, ինչպես Պարսկաստանը, Ասորիքը, Միջագետքը, Պաղեստինը, Փյունիկիան և այլն: Այնուհետև անցավ Եգիպտոս՝ Աֆրիկայի արևմտյան մասը և այստեղից Իսպանիա:

Եթե այդ արշավանքի հեղեղին չկարողացավ դիմանալ Պարսկաստանի նման հզոր ու ընդարձակ պետությունը, ապա ևս ավելի դժվար կլինեի Հայաստանի համար պայքարել անապատներից փրթած այդ հորդանների դեմ, որոնք իրենց ճանապարհի վրա խորտակում էին ամեն ինչ, մատնում հրի և սրի:

Բայց և այնպես հայ ժողովուրդը հեղուկյամբ չենթարկվեց արաբական արշավանքին: Ժողովուրդը ոտքի ելավ օտար նվաճողի դեմ: Թեոդորոս Ռշտունու, Մուշեղ Մամիկոնյանի և հայ բենասեր այլ ղորավարների ղեկավարությամբ հայ ժողովուրդը հերոսական զինադրություն ցույց տվեց արաբներին: Բազրատունի և Արծրունի իշխանները երկարատև մարտեր մղեցին արաբական հորդանների դեմ, բավական ժամանակ երկիրն ազատ պահելով նվաճողներից:

Սակայն թշնամին ուժեղ էր: Նա նոր ուժեր բերելով կարո-

դառնալ ճնշել Մուշեղ Մամիկոնյանի հերոսական դիմադրությունը: Բայց դրանից հետո նույնպես ժողովուրդը երբեք չզաղասեցրեց իր ազտաազրական պայքարը: Սասունցիք, ապաստանած իրենց անմատչելի լեռներում, ջախջախիչ հարվածներ հասցրին արաբներին: Ժողովրդական հերոս խուժեցի Հովնանի ղեկավարությամբ նրանք խորտակեցին արաբական մի խոշոր բանակ և ազանեցին նրա հրամանատարին:

Արաբները դեմ մղված այս համառ, հերոսական մարտիքի մասին հայ ժողովուրդը հյուսել է իր էպոսը Սասունցի Դավթի մասին: Սասնա տան դյուցազնները՝ Առյուծանման Մհերը, Գովիթը, Փոքրիկ Մհերը և նրանց ազգականներն ու զինակիցները հանդիսանում են ժողովրդի երևակայության մեջ բանաստեղծական ձևով հյուսված հերոսական դեմքեր: Նրանց մեջ մենք տեսնում ենք իրական դեպքերի, ժողովրդի մղած ազատազրական մարտերի արտացոլումը:

Ազատազրական այդ մարտերի հետևանքով հայ ժողովուրդը Զրդ դարում կարողացավ վերականգնել իր անկախությունը: Հիմնվեց Բագրատունյաց թագավորությունը, որը հետզհետե աճեցաճաճեց անտեսապես, քաղաքականապես և կուլտուրապես, թարգմանեց Անի հռչակավոր մայրաքաղաքը:


10-րդ դարում քաջարի Աշոտ Երկաթը և հայրենասեր զորավոր Գևորգ Մարզպետունին զարտության մասնեցին արաբների մի խոշոր բանակ, որը Բեշլիի գլխավորությամբ եկել էր նորից ստրկացնելու հայերին:

Բագրատունյաց Աշոտ III թագավորի օրով արաբները Համառոն գործադետը, Ատրպատականը և Միջագետքը ոտնակոխ տնկելուց հետո, արշավեց Հայաստանի վրա:

Հայկական զորքը Աշոտ Բագրատունու ղեկավարությամբ զուրս եկավ կատաղի թշնամու դեմ: Տեղի ունեցած արշավանահեղ ճակատամարտում Համառոն գործավարը չարաչար պարտություն կրեց: Աշոտը բռնեց նրան և գլխատեց:

Երբ այս լուրը հասավ արաբներին ամիրապետին, նա փոխանակ զայրանալու շատ դուռ մնաց և չնորհակալություն հայտնեց Հայոց Աշոտ թագավորին, որովհետև Համառոնը ապստամբել էր իր դեմ ու չէր ենթարկվում ամիրապետին:

Ամիրապետը շատ ընծաներ և մի թագ ուղարկեց Աշոտին, տալով նրան «Շահ Արմեն, այսինքն «Հայոց թագավոր» տիտղոսը:



Այս խաղաղի ներսովան պատերազմային ժամանակ Գաղաթի զինուորական

Ինչպես տեսնում ենք, Թշնամիներն անդամ հարկադրվեցին՝ ճանաչել հայ Ժողովրդի ազատությունն ու անկախությունը, որոնց համար նա հերոսաբար պայքարել ու արյուն էր թափել:

Աչոտ Բաղրատունին, որ պատմության մեջ կոչվում է Ողորմած, կարողացավ երկար տարիների ընթացքում երկիրը պահել խաղաղության մեջ: Նա ավելի ճիսացրեց Անի մայրաքաղաքը, կառուցելով այնտեղ բազմաթիվ հոյակապ շենքեր: Աչոտ Ողորմածի օրով են կառուցված նաև Սանահնի և Հաղպատի հրուշակավոր վանքերը:

Հայաստանն այդ շրջանում վերելք էր ապրում, որը իր դադաթնակետին հասավ Սմբատ IV և Գագիկ I թագավորներին օրով:

Հայաստանն առևտրական կապեր էր հաստատել Բյուզանդիայի, Արաբիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի և այլ երկրներին հետ: Անի քաղաքը դարձել էր առևտրական հռչակավոր կենտրոն, որի միջոցով Արևմուտքը և Արևելքը, Նիքոպոլիս և Ասիան կապ էին պահպանում իրար հետ:

Հայաստանի մայրաքաղաքը աշխարհի ամենահարուստ և ամենաշքեղ քաղաքներից մեկն էր, որի ճարտարապետական կառուցվածքները հիացմունք էին պատճառում բոլորին և այսօր էլ այդ շենքերից մնացած ավերակներն սքանչացնում են ճանապարհորդներին և մասնագետներին:

Բաղրատունիների օրով նույնպես Հայաստանը բարեկամական դաշինք ուներ Վրաստանի, Աղվանների և անդրկովկասյան այլ Ժողովուրդների հետ: Ուրդ դարում, երբ սելջուկները Արևելքից արշավեցին Հայաստանի և Կովկասյան այլ երկրներով, հայերը և վրացիները միասին դիմադրեցին այդ հորդանքին և հերոսաբար պաշտպանեցին իրենց անկախությունը:

Սակայն վտանգը գալիս էր ոչ միայն Արևելքից: Արևմուտքում ղեռնա իր հզորությունը պահպանում էր Բյուզանդիոնը: Դա նախկին հռոմեական կայսրությունն էր, որը վերածվել էր հունական պետության, մայրաքաղաք ունենալով Կ. Պոլիսը:

Բյուզանդիոնը դաբերի ընթացքում փոփոխական քաղաքականություն էր վարում Հայաստանի հանդեպ, սակայն որպես թրիստոնյա պետություն, մեծ մասամբ իրեն համարում էր Հայաստանի դաշնակից:

Միաժամանակ Բյուզանդիոնը ձգտում էր նվաճել Հայաստանը և միացնել այն իր կայսրությանը:

Բյուզանդիոնի և Պարսկաստանի միջև դարերի ընթացքում մղվում էին պատերազմներ: Հայաստանը հաճախ դառնում էր այդ պատերազմների թաղերաբեմը, որովհետև գտնվում էր այդ երկու հզոր պետությունների միջև:

Հայ ժողովուրդը պատմություն ընթացքում հաճախ իր հուրճքը դեմ է տվել Արեւելից արշավող հորդաներին, ինչպես օրինակ սելջուկների, մոնղոլների, ոսմանցիների և այլ ցեղերի արշավանքներին, որոնք սպառնում էին ոտքի տակ տալ Եւրոպան:

Առանձնապես հսկայական դեր է խաղացել Հայաստանը, պաշտպանելով Բյուզանդիոնի սահմանները, արեւելյան թշնամի ուժերից: Չնայած դրան Բյուզանդիոնը հատկապես վերջին դարերի ընթացքում Հայաստանի նկատմամբ սկսեց վարել նենդ, նվաճողական քաղաքականություն:

Բաղրատունիների ժամանակ, երբ Հայաստանը անտեսական և կուլտուրական դարդացման բարձր մակարդակի վրա էր զուտնքվում և Անի քաղաքը դարձել էր համաշխարհային առևտրի կենտրոններից մեկը, Բյուզանդիոնի կայսրը ցանկացավ ձեռք դնել այդ վաճառաչահ, չքեղ քաղաքը:

Սմբատ II-ի մահից հետո դահ բարձրացավ Գաղիկ I Բաղրատունին, որի օրով երկիրն էլ ամբողջ բարդավաճեց ու հզորացավ: Հայկական դորքի ընդհանուր հրամանատարությունը իր վրա էր վերցրել Վահրամ Պահլավունին, որը թշնամիների ձեռքից ազատեց մի շարք ամրոցներ ու բերդեր:

Սակայն Գաղիկ թաղավորին հաջորդող Հովհաննես-Սմբատը թույլ մարդ էր. նա վախեցավ Բյուզանդիոնից: Երբ Բյուզանդիոնի Վասիլ կայսրն արշավեց Վրաստանի վրա Հովհաննես Սմբատը վախենալով նրանից, խոստացավ իր մահից հետո Անի քաղաքը հանձնել հույներին. դրա համար կնքվեց մի մուրհակ (հեռակար), որով Անին վաճառվում էր Բյուզանդիոնին: Դա մի դավաճանական գործ էր հայ ժողովրդի նկատմամբ, որ ծածուկ կերպով կատարել էր Հովհաննես-Սմբատը:

Հովհաննես-Սմբատի մահից հետո հույները պահանջեցին Անին: Հանդես եկավ մի այլ դավաճան իշխան—Վեստ-Սարգիսը, որը կողմնակից էր Բյուզանդիոնին և ձգտում էր նրա հովանավորություն տակ իշխել Անիում:

Հայ ժողովուրդը ոտքի ելավ դավաճանների դեմ: Նա չէր ուզում գիջել ոչ մի թիղ իր հայրենի հողից, և քառվել Անիի

ձեան մի հրաշալի քաղաք, որի վրա նախանձով էին նայում թշնամիները:

Բյուզանդիոնի կայսրը, տեսնելով որ հայերը չէին ցանկանում իրենց հոգաբար կամքով հանձնել Անին, լսել անդամ չին ազում Հովհաննես Սմբատի տված թղթի մասին, համարելով այն ապօրինի և դավաճանական դործարք, հրամայեց իր զորքերին շարժվել դեպի Հայաստանի սահմանները և բռնի ուժով խլել հայոց չքնդ մայրաքաղաքը:

Բյուզանդական մի հոկայական բանակ, բաղկացած 100,000 մարդուց, արեւմուտքից շարժվեց դեպի Հայաստան, ավերելով ու կողոպտելով երկրի սահմանամերձ շրջանները: Հայրենիքը վտանգի մեջ էր: Երկրին հավատարիմ հայ իշխանները, զորք և ժողովուրդը համախմբվեցին՝ միահամուռ հակահարված տալու լիտիացած թշնամուն, որը ուխտադրուժ կերպով հարձակվում էր իր նախկին դաշնակցի՝ Հայաստանի վրա:

Հայրենիքի համար սպառնալի այդ օրերին ևս հայկական զորքի սպարապետն էր Վահրամ Պահլավունի հայրենասեր զորավարը, որը Գաղիկ I-ի օրով փայլուն հաղթանակներ էր տալիս թշնամիների վրա և ապահովել էր հայրենիքի սահմաններն ռաբար նվաճողներին:

Վահրամ Պահլավունին ծնված է մոտավորապես 967 թվին: Նրա հայրն էր Պահլավունի Գրիգոր իշխանը, իսկ մայրը Ծաւշանիկ տիկնանց տիկինը: Պահլավունի իշխանների կենտրոնն էր Բջնին, որտեղ մինչև այսօր էլ մնում են հոյակապ շենքերի ավերակները:

Վահրամ Պահլավունին 15 տարեկան էր, երբ վախճանվեց նրա հայրը: Հաջորդելով իր հորը, նա զբաղվեց երկրի բարեկարգությամբ, առանձնապես ուշադրություն դարձնելով հողադործության վրա: Վահրամ իշխանը իր հայրենի ավանը զարդարեց գեղեցիկ շենքերով ու եկեղեցիներով:

Սակայն երկրի խաղաղությանը սպառնում էին արտաքին թշնամիները: Պահլավունի իշխանը երիտասարդ հասակից մտած զինվորական ասպարեզը և ցույց տվեց իրեն որպես խիզախ ու հմուտ ռազմիկ: Վահրամի եղբայրը Վասակը նույնպես քաջ ու հանդուգն ռազմիկ էր: Պատմության մեջ հայտնի է, թե ինչպես սելջուկների արշավանքի ժամանակ Վասակ Պահլավունին 500 հոգով Բջնի ամրոցից դրոհեց թշնամիների վրա և թրի մի հար-

վածով գետին տապալեց սելջուկները մեջ հռչակված մի հսկա նեղրի, որին անվանում էին «Յոթնազուլ»:

Վահրամ Պահլավունիի օրով կառուցվեց Մարմաշենի ամրոցը, ուր գտնվում էր նաև Մարմաշենի նշանավոր վանքը: Այսօր մինչև այսօր էլ ամերականների վրա մնացել է այն արձանագրությունը, որը փորագրել է տվել Վահրամ սպարապետը:

Արփաչայի ձորի ժայռապատ զառվարյուն բարձրանում էր Մարմաշենի բերդը, Պահլավունիների տոհմական կալվածքը, այնտեղ էլ թաղված է հայրենասեր զորավարը:

Վահրամ Պահլավունու համբավը որպես քաջ զորավարի շուտով տարածվեց ամենուրեք, նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս: Նա դարձավ Գաղիկ I-ի աջ բաղուկը և մեծ ջանքով օգնեց Բագրատունյաց թագավորության հզորացմանը: Բյուզանդիայի կայսրը, լսելով նրա արժանիքները մասին, շնորհեց նրան «անթիպատ պատրիկի» տիտղոսը: Նույնպիսի բարձր պատիվներ շնորհեցին Վահրամ սպարապետին նաև Բաղդադի (արաբների) խալիֆը և Պարսկաստանի էմիրները:

Սակայն քաջ զորավարը չչլացավ այս պատիվներից ու պարգևներից: Հատկապես նա չհրապուրվեց Բյուզանդիոնի առաջարկներով՝ թողնել հայրենիքը և ծառայել Բյուզանդիոնում, ստանձնելով զինվորական բարձր պաշտոններ: Վահրամ Պահլավունին չդավաճանեց իր հայրենիքին ու ժողովրդին և շարունակեց հավատարմությամբ ծառայել նրան, կուրծքը դեմ տալով ներքին և արտաքին թշնամիներին:

Եվ ահա հայրենիքին սպառնացող այդ ահավոր ժամին ծերունի սպարապետը կրկին հանդես եկավ օտար նվաճողների դեմ:

Բյուզանդական զորքերը արդեն մոտենում էին Անի քաղաքին և պաշարել էին Հայաստանի այդ հոյակապ մայրաքաղաքը, որ զարդարված էր բաղմաթիվ գեղեցիկ շենքերով, հրապարակներով, ուներ հարուստ շուկաներ և հասարակական վայրեր:

Պաշարելով քաղաքը, բյուզանդացիները սկսեցին հայհոյանքներ և նախատինքների տարափ թափել հայերի դիմին, որովհետև զգում էին, որ անգոր են խորտակելու Անիի ամուր պաշտպանները և բարձր աշտարակները: Սակայն հույս դրած իրենց ուժերի վրա, հույները (այսինքն բյուզանդացիք) մտադիր էին քրեարատե պաշարումով ստիպել հայերին աճնատուր լինելու:

Սակայն անեցիները վճռել էին դիմադրել հափշտակչներին մինչև վերջին շունչը և չհանձնել նրանց իրենց շքեղ մայրաքա-

ղաքը: Գաղաքում կար հայկական փողբաթիվ զորք: Ժողովուրդը միահամուռ ոտքի ելավ և ղեմելով սպարապետ Վահրամ Պահլավունուն, հայտնեց իր պատրաստակամութունը մինչև արյան վերջին կաթիլը կռվելու օտար նվաճողի դեմ:

— Ավելի լավ է մեր դիակները թաղվեն Անիի պարիսպները տակ, քան անպաշտպան հանձնենք այն Բյուզանդիոնի կայսրին, — ասում էին անեցիկները:

Հայկական զորքերի թիվն այսպիսով աճեց ու հասավ 30·000-ի, որը պետք է կռվեր բյուզանդական 100·000-անոց վիթխարի բանակի դեմ:

Բյուզանդացիներն արդեն սկսել էին հատուկ զործիքներով, բարաններով ու խոյերով Անիի պարիսպները քանդելու փորձեք կատարել: Վահրամ սպարապետը չսպասեց, որ պաշարողները շարունակեն իրենց կործանիչ աշխատանքը: Նա իր զորքի մեկ փոքր մասը թողնելով պարիսպների ու աշտարակների վրա և քաղաքադռների մոտ, իր ղլխավոր ուժերին հրաման տվեց պատրաստվելու գրոհի:

Թշնամին երբեք չէր սպասում, որ պաշարվածները փողբաթիվ ուժերով նման հուսահատական փորձ կկատարեն:

Դեռ լույսը չբացված հանկարծ բացվեց Անիի Ավագ դուռը և հայկական զորքը Վահրամ Պահլավունու անձնական ղեկավարությամբ սրնթաց դուռն խուժեց քաղաքից և գրոհեց պաշարողներին վրա:

Հարձակումն անակնկալ էր ու փոթորկալի: Բյուզանդացիները չէին մացան այդ կործանիչ հարվածին, որը ահուկի թափով խառնեց և ոտքի տակ տվեց հակառակորդի մարտակարգերը:

Տեղի ունեցավ անասելի մի ջարդ: Անեցիկները, վրդովված իրենց մայրաքաղաքը պաշարողների հայհոյանքներից և լցված վրեժխնդրական ցասումով գրոհեցին թշնամիների վրա և կոտորեցին անխնայ: Գրոհող հայրենասերների աղաղակներից և ցասումից չփոթված հակառակորդը խուճապահար սկսեց փախուստ տալ: Անիի շրջակա դաշտերը ծածկվեցին բյուզանդական զորքերի դիակներով և ինչպես ասում է պատմագիրը՝ Ախուրյան գետը ներկվեց նրանց արյունով:

Հաղթանակը կատարյալ էր: Վահրամ Պահլավունին հրամայեց դադարեցնել կոտորածը: Թշնամու կորուստների թիվը, պատմագիրների վկայությամբ, հասնում էր քսան հազարի: Բյուզանդական դուռը կայսրը ոչ միայն չկարողացավ դբավել

Անին, ալլ և նրա պարիսպների տակ կրեց խայտառակ պարտու-
թյուն և նրա զորքի մնացորդները հետ փախան ամոթահար:

Հայրենիքը մի առ ժամանակ աղատված էր ահալոր վտան-
գից: Վահրամ Պահլավունին Բաղրատունիների դահի վրա նրա-
տեցրեց 16 տարեկան պատանի Գաղիկ Բաղրատունուն:

Դավաճան Վեստ-Մարդկաբ, որը դեռևս գտնվում էր Անիում,
իր համախոհների հետ ամրացավ միջնաբերդում և չէր ուզում
ենթարկվել նոր թագավորին: Գաղիկ II-ը Վահրամ Պահլավու-
նու օգնութեամբ բռնեց ապստամբ դավաճանին և չլթայակաղ
անելով բանտարկեց: Մակայն նենդ ու խորամանկ Վեստ Մարդի-
սը կարողացավ համոզել քաջ, բայց դեռևս անփորձ Գաղիկին և
բանտից ազատ արձակվելով շարունակեց իր դավերը հայրենիքի
դեմ:

Բյուզանդիայի կայսրը չէր մոռացել իր զորքերի չարաչար
պարտությունը և չէր հրաժարվել Անին հափշտակելու մտքից:
Դավաճան Վեստ-Մարդսի խորհուրդով նա կրկին պահանջեց
իրեն հանձնել Հայաստանի մայրաքաղաքը:

Եկավ բյուզանդական ղեկավարը, բերելով Հովհաննես-Սմբա-
տի տված հետևարը, որով նա Անին վաճառել էր կայսրին: Գա-
ղիկը կտրականապես մերժեց հույների պահանջը և ասաց նրանց
ղեկավարին.

— Երկիրը և մայրաքաղաքը պատկանում է ժողովրդին. ոչ
ոք իրավունք չունի վաճառել կամ ուրիշին հանձնել դրանք:

Բյուզանդական բանակը նորից մտավ Հայաստան, քարու-
քանդ անելով երկիրը: Հայկական զորքը Գաղիկ II-ի և Վահ-
րամ Պահլավունու ղեկավարութեամբ ջարդեց հունական բանա-
կը և դուրս քշեց երկրից:

Բյուզանդիայի Մոնոմախ կայսրը, տեսնելով, որ չի կարո-
ղանում բռնի ուժով տիրանալ Անիին, դիմեց խորամանկութեան:
Նա Կ. Պոլիս հրավիրեց Գաղիկին բանակցությունների անվան
տակ և ուխտադրուժ կերպով ձերբակալելով նրան աքսորեց Մար-
մարա ծովի կղզիներից մեկը:

Վահրամ Պահլավունին խորհուրդ էր տվել երիտասարդ թա-
գավորին չզնալ Կ. Պոլիս, բայց նա չէր լսել նրա խորհուրդը:
Ծերունի սպարապետը տխրելով հեռացավ իր ամրոցը: Սակայն
չուսով հայրենիքը նորից կանջեց նրան:

Բյուզանդացիներն արդեն տիրել էին Անիին, որովհետև

Վեստ-Սարգիսը և նրա համախոհ՝ դավաճան իշխանները նրա գունդը բացել էին օտար նվաճողի առաջ:

Այդ ժամանակ Դվինում նստող արաբական էմիր Աբուսավաբը սկսել էր ասպատակել երկիրը, ավերել ու կողոպտել Արաբատյան դաշտից մինչև Շիրակի սահմանները:

Հայրենասեր զորավարը չէր կարող անտարբեր մնալ արաբների կատարած այս խժդժությունների հանդեպ:

Վահրամ Պահլավունին նորից անցավ գործի դուռն և արշավեց էմիր Աբուսավաբի հրոսակախմբերի վրա: Սպարապետի հետ էր իր երիտասարդ որդին՝ Գրիգոր Պահլավունին: Հայկական զորքը մարտերի մեջ կոփված ծերունի զորավարի հրամանատարութեամբ ջախջախիչ հարված հասցրեց Աբուսավաբի զորքերին, որոնք չգիմանալով հայրենատերերի կատաղի զրոհին, փախան մինչև Դվինի պարիսպները:

Սակայն ճակատամարտում քաջի մահով ընկավ Գրիգոր Պահլավունին: Էլ ավելի բորբոքվեց ծերունի սպարապետի ցաւումը, ու մոռացած ամեն ինչ, լռի իր սիրելի հայրենիքի և հարազատ որդու վրեժը սրտում, սուրը մերկացրած Վահրամ Պահլավունին նետվեց թշնամիների բազմութեան մեջ, իր դեռևս հուժկու բազկով ոչնչացնելով նրանցից շատերին:

Բայց մարտում ընկավ և ինքը, հռչակավոր սպարապետ Վահրամ Պահլավունին: Նա ընկավ որպես հայրենիքի անձնվեհ պաշտպան մինչև վերջին շունչը պայքարելով նրա աղատութեան համար:

Վահրամ Պահլավունու մահը մեծ կորուստ էր հայ ժողովրդի համար: Հայրենիքին սպառնացող վտանգի բույներին նա հայտնելովում էր միշտ զորքի առջևում և տանում նրան դեպի պատերազմ և հաղթանակ: Նա հսկայական հեղինակութուն ունեւ ժողովրդի ամենալայն զանգվածներում: Նույնիսկ հարևան ժողովուրդները, ինչպես օրինակ եղբայրական Վրաստանը, Գրիգոր Մազիստրոսի վկայութեամբ, մեծարում էին Վահրամ Պահլավունուն և երգեր հորինում նրա մասին: Վահրամ Պահլավունին հայ ժողովրդի պատմութեան ամենից ականավոր և պայծառ դեմքերից մեկն է որպես հայրենասեր զորավար, որը իր կյանքը զոհեց իր ժողովրդի փրկութեան համար:

Ինչպես Վարդան Մամիկոնյանը, նա սերունդների հիշողութեան մեջ մնացել է որպես ժողովրդական հերոսի տիպար:

ԹՈՐՈՍ ԼԵՎՈՆԻ



ազրատունի վերջին թագավոր Գագիկ II-ը, զրկվելով գահից, երկար տարիներ ընթացքում ապրեց աքսորանքի մեջ և սպանվեց թշնամիների ձեռքով 1079 թվին: Անի քաղաքն ընկավ բյուզանդացիների ձեռքը, բայց նրանք երկար չվայելեցին Հայաստանի այդ չքեղ մայրաքաղաքը: Արևելքից եկավ սելջուկներ ի մի նոր հեղեղ Տուղրիլ բեկի գլխավորությամբ: Բարբարոս հորդաները սկսեցին ավերել ու կողոպտել Հայաստանը: Հայր կալան իշխանության մնացորդները հերոսական դիմադրությոն ցույց տվին սելջուկներին, սակայն չկարողացան կասեցնել նրանց արշավանքը:

Տուղրիլ բեկի ուժակները դեմ մղված արյունահեղ ճակատամարտերից մեկում հայկական զորքի հրամանատարներից երիտասարդ Թաթուլ իշխանը կռվի ժամանակ մահացու վերք հասցրեց սելջուկ զորավարներից մեկի որդուն, սակայն չընկալապետվելով թշնամիներից՝ դերի ընկավ: Տուղրիլը հրամայեց իր առջև բերել Թաթուլին և ասաց նրան. «Քո ձեռքով ծանր վերավորվել եմ զորապետ Ասուրանի որդին, եթե նա ապրի, կյանքդ կխնայեմ, իսկ եթե ոչ, կյանքդ կզոհեմ նրան»: Գաջաբի երիտասարդը պատասխանեց. «Եթե հարվածն իմն է, չի ապրի»: Եվ իրոք վերավորը շուտով մեռավ: Տուղրիլը հրամայեց սպանել Թաթուլին և աջ ձեռքը կտրելով տանել սելջուկ զորապետին:

Տուղրիլի հաջորդ Ալիարսլանը, գրավելով Անին, հրի է սրի մատնեց այն, կողոպտելով հուշակավոր մայրաքաղաքի հարբատությունները:

Հայ ժողովրդի մի մասը գաղթեց հայրենի երկրից, մի մասն էլ ամրանալով անառիկ լեռներում, շարունակեց հերոսական դիմադրություն ցույց տալ օտար նվաճողներին: Գաղթողները

մի մասն ապաստանեց Հայաստանի հարավ-արեւմտյան կողմի գտնվող Կիլիկիայի Տավրոս և Սմանոս լեռներում, որտեղ գե-
ւա VI դարից սկսած բավական թվով հայեր էին ապրում:

Կիլիկիայի սահմաններն են՝ հարավից Միջերկրական ծովը, արեւելքից Սմանոսի լեռնաշղթան, հյուսիսից և արեւմուտքից Տավ-
րոս լեռները: Սելջուկների արշավանքի ժամանակ XI դարում
հայերը Կիլիկիայում ունեին բավական մեծ թվով գյուղեր և
ավաններ, նույնիսկ բերդեր ու վանքեր: Այն լեռների (Սմանոս)
անմատչելի բարձունքներում նրանք կարողացել էին պահպանել
իրենց անկախութիւնը: Սակայն նրանք բաժան-բաժան էին,
չկար մի հզոր ձեռք, որ միացներ այդ փոքրիկ իշխանություն-
ները:

Բաղրատունյաց Գագիկ II թագավորի մահից մի տարի անց,
1080 թվին նրա ազդականներից մեկը Ռուբեն անունով անցավ
Կիլիկիայի Տավրոս լեռները և այնտեղ միացնելով անջատ իշ-
խաններին և տանուտերերին, հիմք դրեց հայկական մի նոր իշ-
խանության: Կիլիկիայի հայկական իշխանությունը Ռուբենի
անունով կոչվեց Ռուբինյան:

Ռուբենին հաջորդեց նրա Կոստանդին որդին, որը ավելի
ընդարձակեց իր նոր պետության սահմանները, բյուզանդացիներ-
ից խլելով բերդեր ու քաղաքներ:

Կոստանդին I-ի օրով Կիլիկիայի վրայով անցավ խաչակի-
րների առաջին արշավանքը: Խաչակիրները Արեւմտյան Եվրոպայի
դանազան ժողովուրդներին պատկանող ասպետներ և ռազմիկներ
էին, որոնք իրենց թագավորների ղեկավարութեամբ ցանկանում
էին Երուսաղեմն ազատել արաբների տիրապետութիւնից: Երու-
սաղեմը որպէս Քրիստոսի ծննդավայրը և գերեզմանը քրիստո-
նյանների կողմից համարվում էր սրբազան քաղաք: Հայոց Կո-
ստանդին իշխանը մեծ օգնութիւն ցույց տվեց խաչակիրներին,
տրամադրելով նրանց զորք, ռազմաթէրք և պաշարեղէն: Եվրո-
պացի պատմադիրները հատկապէս նշում են հայերի օժանդա-
կութիւնը խաչակիրների արշավանքին:

Կոստանդինի որդին Թորոս I-ը երկրի սահմանները հասցրեց
մինչև Միջերկրական ծովը, զբաղեց բյուզանդացիներից Անա-
դար բերդաքաղաքը և մի շարք այլ քաղաքներ: Նրա օրով Կի-
լիկիայի հայ իշխանութիւնն ավելի զորացավ: Եվրոպայում
հռչակվեց հայոց Թորոս իշխանի անունը:

Թորոսի եղբայր Լևոնը հաջորդելով նրան, երկիրն ապահովեց թշնամիների արշավանքներից, բյուզանդացիներից զբաղեց Կիլիկիայի Մամեստիա, Ադանա և Տարսոն քաղաքները: Միջերկրական ծովի վրայով սկսվեց առևտուրը Եվրոպայի հետ: Լևոնի քաջության համբավը տարածվեց ամենուրեք, եվրոպացի անպետքները նրան անվանեցին «Տավրոսի առյուծ»:

Բյուզանդիայի կայսր Հովհաննես Կոմնենոսը ծուռ աչքով էր նայում Կիլիկիայի հայ իշխանության ուժեղանալու վրա. նա ուզում էր իրեն ենթարկել Սև լեռների անմատչելի բարձունքներում իր աղբյուրն անկախությունը պաշտպանող հայ ժողովրդի մի մասին:

Բյուզանդական մի հսկայական բանակ արշավեց Կիլիկիայի վրա: Հայ լեռնականները Լևոնի ղեկավարությամբ հերոսական դիմադրություն ցույց տվին բյուզանդացիներին, սակայն թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ պարտվեցին և Լևոն իշխանն իր ընտանիքով գերի տարվեց Կ. Պոլիս:

Կիլիկիայի հայ իշխանությունը կորցրեց իր անկախությունը: Լևոն իշխանը մեռավ բանտում, իսկ նրա երկու որդիները՝ Ռուբենը և Թորոսը մնացին Կ. Պոլսում որպես պատանդ: Կայսրը հրաչեկ երկաթով կուրացրեց Ռուբենին, որը Փիղիքական մեծ ուժի տեր խիզախ մի երիտասարդ էր: Կրտսեր եղբայր Թորոսը հոր և եղբոր մահվան վրեժը սրտում, մտածում էր իր հայրենիքի անկախությունը վերականգնելու մասին: Նա խորամանկությամբ կարողացավ շահել կայսրի վստահությունը որպես Բյուզանդիայի կողմնակից և բանտից ազատ արձակվեց:

Թորոսը բարձրահասակ, վայելչակազմ և քաջ երիտասարդ էր: Նա հիմնալի կերպով գիտեր հունարեն լեզուն և ծանոթ էր պաշտական սովորություններին: Արտաբուստ ցույց տալով իրեն հավատարիմ Բյուզանդիային, նա ծածուկ կերպով ծրագրում էր փախչել Կ. Պոլսից և հայրենի լեռներում բարձրացնել անկախության դրոշմ:

Վերջապես Թորոսին հաջողվեց վաճառականի տարազով ծալոված նավով մեկնել Կ. Պոլսից: Հասնելով Կիպրոս կղզին, երիտասարդ իշխանը այնտեղից ուղեւորվեց Անտիոք քաղաքը: Այստեղ նա գտավ մի քանի հետևորդներ և նրանց ուղեկցությամբ ոտքով հասավ մինչև Սև լեռները:

Սակայն Թորոսը խոհեմ էր և զգուշ: Նա խօսույն հայտնեց իր ուլ լինելը, այլ հովվի զգեստ հագած սկսեց շրջել հայրենի

լեռները և ծանոթանալ ժողովրդի դրությանը, հարցումորձ անել դյուղացիներին, հետախուզել երկրի ամրոցները, որոնք գտնվում էին բյուզանդացիների ձեռքում:

Ամենուրեք թորոս իշխանը տեսնում էր ժողովրդի բուռն ատելությունը օտար նվաճողների դեմ, որոնք կեղեքում և ճնշում էին հայ ազգաբնակչությանը. միայն լեռներում ապաստանածները մասամբ ազատ էին մնում այդ ճնշումից: Թորոսը հասկացավ որ հարկավոր է մի կայծ, և ժողովրդի ապստամբությունը կբռնկվի Բյուզանդիայի դեմ: Սև լեռնցիները պատրաստ էին զենքը ձեռին ոտքի ելնել և դուրս քշել օտար նվաճողներին հայրենի երկրից:

Զգալով, որ հասել է ժամանակը, թորոսը իր փոքրաթիվ կողմնակիցների միջոցով լուր ուղարկեց հայ լեռնցիներին, թե Կ. Պոլսում մահացած Լևոն իշխանի որդին կենդանի է, գտնվում է հայրենի հողի վրա: Այդ լուրը կայծակի արագությամբ տարածվեց Կիլիկիայում՝ Տավրոսի և Ամանոսի լեռներում: Հայ իշխանները և ռազմիկները շուտով համախմբվեցին թորոսի շուրջը և հայտարարեցին նրան Լևոն իշխանի հաջորդ՝ թորոս II իշխան Կիլիկիայի:

Ժողովուրդը ազատ շունչ քաշեց: Երկրից վաղվեցին բյուզանդական կեղեքիչները: Լևոնի որդի թորոսը թեև կրում էր իշխանի տիտղոսը, սակայն փաստորեն հանդիսանում էր անկախության ձգտող հայ ժողովրդի ռազմական ղեկավարը: Պատմագիրները թորոսին անվանում են թորոս զորավար: Նա միշտ գտնվում էր զորքի հետ, նրա չարքաշ կյանքին մասնակից, շարունակ կռիվների մեջ Սև լեռների անմատչելի բարձունքներում:

Կարճ ժամանակում թորոսը հավաքեց 10 հազարանոց մի բանակ: Նրա մոտ գալիս էին երիտասարդներն ու նույնիսկ ծեբերը, ոգեշնչված հայրենիքի ազատագրման տենչով: Կիլիկիայի լեռներում հնչում էր «Թորոս և ազատություն» նշանաբանը, որ իբրև մարտակոչ կանչում և ոգեշնչում էր բոլոր հայրենասերներին ոտքի ելնելու օտար նվաճողների դեմ:

Թորոս զորավարի առաջին դործը եղավ դրավել Կիլիկիայի բերդաքաղաքները, հռչակավոր վահկա ամրոցը, Սիմանկա և Առյուծ բերդերը: Իբար հետևից թորոսի ձեռքն ընկան Ադանա, Անարզաբա, Մամեստիա և այլ քաղաքները: Բյուզանդացիները ամենուրեք ջարդվեցին և դուրս քշվեցին Կիլիկիայից:



Բազմաթիվ զննողները Թորոս մոտ

Բյուզանդիայի Մանուէլ կայսրը լսելով այդ բոլորը խիստ
զայրացաւ, մանավանդ երբ իմացաւ, որ Կ. Պոլսից փախած
Թորոսն է ապստամբութեան ղեկավարը: 1152 թվին Անդրոնիկոս
գորավարի հրամանատարութեամբ բյուզանդական մի մեծ բա-
նակ իջաւ Կիլիկիայի ծովափը և շարժեց Թորոսի վրա: Անդ-
րոնիկոսը վճռել էր վերջ տալ հայկական անկախ իշխանութեա-
նը և իրեն՝ Թորոսին էլ գերի վերցնելով տանել Կ. Պոլիս:

Այդ ժամանակ Թորոս իշխանն իր գործով դանդաղ էր Մա-
մեստի քաղաքում, որը շրջապատված էր ամուր պարիսպնե-
րով: Անդրոնիկոս գորավարը պաշարեց քաղաքը և մի գետալանի
միջոցով առաջարկեց Թորոսին անձնատուր լինել: «Կայսրի հրա-
մանն է քեզ շղթաներով կապել և հորդ նման Կ. Պոլիս տանել»,
— ասաց բյուզանդացի գոռոզ գորավարը: Թորոսը ոչինչ չպա-
տասխանեց ինքնալստահ թշնամու այդ լկտի առաջարկին: Նա
ունէր իր ծրագիրը:

Փոթորկալի մի գիշեր, երբ բյուզանդական բանակը վրան-
ներում խոր քնի մեջ էր, իսկ Անդրոնիկոս գորավարը, վստահ
իր հաղթանակի վրա, անձնատուր էր եղել կերուխումի, Թորոս
գորավարը հանկարծակի հրամայեց բաց անել քաղաքի դռներէց
մեկը և իր գործը կիսաշրջանի ձևով գտաւորելով, գրոհեց
թշնամիները վրա:

Փոթորիկն ու անձրևը մոլեգնում էին: Բյուզանդացիները
գիշերվա այդ ժամին երեք չէին սպասում, որ պաշարվածները
կարող էին այդպիսի համարձակ և վտանգավոր քայլ անել, ո-
րովհետև Թորոսի ուժերը փոքրաթիւ էին:

Սկսվեց թշնամու գործի կոտորածը: Բյուզանդացիները խու-
ճալի մատնվեցին: Ինքը Անդրոնիկոս գորավարը հաղիվ կարո-
ղացաւ ձի նստելով փրկել իր կյանքը: Գոռոզ բյուզանդացին
փախաւ ամրոթահար:

Թորոսի ձեռքն ընկան մեծ ռազմավար և բազմաթիւ դե-
քիններ, որոնց մեջ կային հայտնի բյուզանդական իշխաններ և
հրամանատարներ: Բյուզանդական գործի մնացորդները նա
նստելով հեռացան Կիլիկիայի ափերից:

Անդրոնիկոս գորավարի խայտառակ պարտութեան լուրը հա-
տաւ Միքայել կայսրին, որը սաստիկ կատաղեց, բայց ոչինչ չէր
կարող անել: Նա մտահոգվեց դերի ընկած իր իշխանների և հրա-
մանատարների վիճակով: Դրա համար էլ պատգամավորներ ու-
ղարկեց Թորոսի մոտ, առաջարկելով նրան փրկանքով ապաստել

Բյուզանդիայի բարձրաստիճան և անվանի իշխաններին :

Երբ պատգամավորները եկան Թորոսի մոտ և առաջարկեցին փրկանք վճարել և ազատել բյուզանդացի իշխաններին, Թորոս զորավարը ասաց նրանց .

— Արժե՞ արդյոք դրամ ծախսել այդպիսի մարդկանց համար, դուք որքա՞ն եք դնահատում սրանց արժեքը :

Դեսպանները չգիտեին, ինչ պատասխանեին : Եթե բարձր զին նշանակեին, ծախսը շատ կլիներ, իսկ եթե ցած զին տային, անպատվություն կլիներ իրենց իշխանների համար :

Ճարահատած նրանք այսպես պատասխանեցին Թորոսին .

— Դուք ավելի լավ գիտեք նրանց արժեքը, ինքներդ որոշեցե՞ք զինը և մենք կվճարենք :

Հայ զորավարը հեզնանքով ասաց բյուզանդացի դեսպաններին .

— Եթե ձեր իշխաններն իրօք արժեք ունենային ինձ համար, ես նրանց չէի վաճառի, իսկ եթե ձեզ համար զին ունեն, ավելք, ինչ ուզում եք և տարե՞ք ձեր իշխաններին :

Դեսպանները մեծ դուժար վճարեցին իրենց իշխանների պատիվը բարձր պահելու համար : Թորոսը հրամայեց տեղնուտեղը մմբողջ դրամը բաժանել իր զինվորներին հենց դեսպանների հերկայությամբ : Բյուզանդացիները ապշեցին այդ առատաձեռնության վրա :

— Ես այսպես եմ վարձատրում իմ զինվորներին, — ասաց նրանց Թորոս զորավարը, — որպեսզի քաջալերվեն և այսուհետե էլ ավելի շատ դերինեք բռնեն ձեր իշխաններից :



Այս փառավոր հաղթանակից հետո, Թորոսը ընդարձակեց իր երկրի սահմանները, դրավեց Տարսոն քաղաքը, հասնելով Միջերկրական ծովափը մինչև Արեքսանդրեաի ծոցը :

Այդ ժամանակ Նրուսաղեմը գտնվում էր խաչակիրների ձեռքում, որոնք արաբներից խլել էին «սուրբ քաղաքը» : Հալեպի Նուրեդդին սուլթանը սպառնում էր հեռ վերցնել Նրուսաղեմը : Պաչակիր ասպետները դիմեցին Թորոսին, խնդրելով նրա օգնությունը Նուրեդդին սուլթանի դեմ, որը միաժամանակ մտադիր էր ասպատակել Կիլիկիայի սահմանները :

Թորոս զորավարը չսպասեց, որ Նուրեդդինն արշավի Կիլի-

կիայի վրա: Նա շտապեց օգնելու խաչակիր ասպետներին և հարձակվելով Հայկաթի սուլթանի զորքերի վրա, ստիպեց նրանց հրաժարվել իրենց մտադրութունից: Թորոսի հաղթանակը՝ Նուրեդդին սուլթանի վրա, արձագանք դտավ ամբողջ Եվրոպայում, որովհետև նա մեծ օգնութուն էր ցույց տվել Երուսաղեմի քրիստոնյա թագավորին և խաչակիր ասպետներին, հետ մղելով նրանց սպառնացող վտանգը: Եվրոպացի մի հին պատմագիրը Թորոս իշխանին անվանում է «Հայաստանի ամենից նշանավոր և հզոր մարդը»:

Սակայն Բյուզանդիայի կայսրը շարունակում էր իր դավերը Կիլիկիայի հայկական իշխանության դեմ: Ձկարողանալով ջախջախել Թորոս իշխանի ուժը, նա դիմեց խորամանկության, — գրգռեց Կոնիայի Մաքսուդ սուլթանին Թորոսի դեմ: Բյուզանդական ընծաներով հրապուրված սելջուկների Մաքսուդ սուլթանը 1157 թվին առանց որևէ պատճառի հարձակվեց Կիլիկիայի սահմանների վրա: Թորոսը դուրս եկավ օտար հափշտակիչների դեմ: Տեղի ունեցավ մի արյունահեղ ճակատամարտ Մելեքիրական ծովի և Ամանոս լեռների միջև ձգված կիրճերում: Մաքսուդ սուլթանի զորքերը չարաչար պարտութուն կրեցին: Շուտով մեռավ սուլթանը, նրա որդին Կըլը՝ Ասլանը ստիպվեց խաղաղութուն կնքել Թորոսի հետ:

Հաղթվ էր Թորոսը մի պահ հանդիստ շունչ քաշել անվերջ պատերազմներից, երբ Բյուզանդիայի կայսրը դրդեց Անտիոքի իշխան, խաչակիր ասպետներին նշանավոր ղեկավարներից Ռենոդը՝ Շատիլիոնին՝ հարձակվել Թորոսի վրա:

Այս անգամ Կիլիկիայի հայկական իշխանութունը ենթարկվում էր ասպետների ուխտադրուժ հարձակմանը: Ռենոդը՝ Շատիլիոնը, հավաքելով եվրոպացի ասպետներին, որոնց շարունակում էր օգնել Թորոսը թշնամիների դեմ մղված պայքարում, անսպասելի կերպով արշավեց Կիլիկիայի հարավային սահմանների վրա:

Բյուզանդիայի կայսրը եվրոպացի ասպետներին մեծ կաշառք էր խոստացել, եթե նրանք ջախջախեն Թորոսի ուժը և ստիպեն նրան զիջումներ անել: Շլացած պարզևից՝ Ռենոդը՝ Շատիլիոնը շտապում էր իրադրժել կայսրի կամքը:

Բայց Թորոսը քնած չէր. հետախույզ սուրհանդակները հայտնել էին նրան Անտիոքի իշխանի զորքերի պատրաստու-

թյունները մասին: Դրա համար էլ Թորոսը հայկական հեծելա-
զորը և հետևակը առաջ շարժեց դեպի հարավ: Միջերկրական
ծովի ափերին Ալեքսանդրետ քաղաքի մոտ տեղի ունեցավ մի
արյունահեղ ճակատամարտ հայկական զորքի և եվրոպացի ա-
պետների միջև: Ռենո-դը-Շատիլիոնի զորքերը պարտվեցին և
նա ստիպված եղավ հաշտություն կնքել Թորոսի հետ:

Թորոսի բոլոր պատերազմների ժամանակ նրա հետ միասին
քաջարար կռվում էին նրա երկու կրտսեր եղբայրները—Մլեհը և
Ստեփանեն: Մլեհը կատաղի և անզուսպ բնավորության տեր մի
երիտասարդ էր: Անցած իր հեծյալ զորքերի գլուխը, նա անխնա
ասպատակում էր թշնամու երկիրը. հատկապես նա ոխ ուներ
բյուզանդացիների վրա, որոնք գերի էին տարել իր հորը և եղ-
բայրներին Կ. Պոլիս, որտեղ լեռներ և Ռուբենը մահացել էին:

Մյուս եղբայրը, Ստեփանեն, որը նույնպես խիղախ ռազմիկ
էր, մշտական հարձակումներով նեղում էր բյուզանդացիներին:
Սակայն մի անգամ Ստեփանեն անդուլյզ գտնվեց և ընկավ թըշ-
նամիների լարած թակարդի մեջ: Բյուզանդացիները դավադրու-
թյամբ բռնեցին նրան և նետելով եռացած ջրով լի կաթսայի
մեջ, չարաչար մահով սպանեցին:

Թորոսը և Մլեհը անսահման վրեժով լցված գրոհեցին թըշ-
նամիների վրա և սոսկալի ջարդ տվին նրանց, կոտորելով ավե-
լի քան տաս հազար մարդ:

Լսելով այդ, Բյուզանդական կայսրը՝ Մանուել Կոմնենը
վճռեց անձամբ արշավել Կիլիկիայի վրա 50 հազար հոգուց բաղ-
կացած մի մեծ բանակով: Բյուզանդական նավատորմը խաբիսիս
ձգեց Կիլիկիայի ծովափին և կայսրն իր զորքերին շարժեց դեպի
երկրի խորքերը:

Թորոսի ուժերը սակավաթիվ էին, բայց նա հույսը դրել էր
Տավրոսի անառիկ լեռների վրա: Բյուզանդական բանակը դրա-
վեց մի քանի քաղաքներ, բայց նրան չհաջողվեց ջախջախել
հայկական զորքը: Թորոսն ամրացել էր լեռնոտ վայրերում և
քերդերում, որտեղից անակնկալ գրոհներ էր դործում բյուզան-
դական զորքերի վրա:

Կայսրը տեսավ, որ հնարավոր չէ տիրել այդ լեռնային եր-
կիրը, որի բնակիչները հերոսական դիմադրություն էին ցույց
ապրիս ապստամբած ժայռերի ծերպերին:

Թորոսը հայտարարեց հայրենիքը վտանգի մեջ: Հայ լեռնը-
յիները, հավատարիմ իրենց պապերի տրադիցիաներին, դենք

վերցրին և վճռեցին թինչև վերջին շունչը պաշտպանել հայրենի երկիրը բյուզանդացիներից :

Կայսրը իր զորավարների հետ դառնում էր Մամեստիա քաղաքում : Նրա զորքը նեղվում էր պաշարի պակասությունից , որովհետև քաղաքների և գյուղերի աղղարնակությունը քաշվել էր լեռները , երկիրը մնացել էր անմշակ , վրա էր հասնում սովի սպառնալիքը :

Թորոսի զորքերը անակնկալ հարձակումներով ոչնչացնում էին թշնամիների առանձին ջոկատները և պաշարեղենի վերջին մնացորդները : Բյուզանդական բանակը հնարավորություն չուներ պատերազմական լաշն դործողություններ կատարելու , իսկ օրեցօր նոսրանում էին նրա շարքերը :

Վերջապես Մանուել կայսրը հարկադրվեց բանակցության մեջ մտնել Թորոսի հետ : Երուսաղեմի քրիստոնյա թաղավոր Բալդվինը հանձն առավ միջնորդի դեր կատարել հաշտության բանակցություններ վարելու համար : Հաշտության պայմաններից առաջինն այն էր , որ կայսրը ճանաչում էր Կիլիկիայի հայկական անկախ իշխանությունը , պահանջելով նրանից միայն անվանական հնազանդություն և Սնարդարա քաղաքը :

Թորոսն ընդունեց այդ պայմանները , որովհետև դրանք չէին խախտում Կիլիկիայի ինքնիշխանությունը և չէին սահմանափակում հայ ժողովրդի ազատությունը :

Բյուզանդիայի համար մեծ առավելություն էր Կիլիկիայի հայկական իշխանության նման մի դաշնակից ունենալը : Դարերի ընթացքում հայկական անկախ պետությունը ծառայել էր որպես պատնեշ Արևելքում՝ Բյուզանդական կայսրությանը սպառնացող արշավանքների դեմ : Սակայն Կ. Պոլսի փառասեր և անհեռատես կայսրերը շարունակ խախտում էին հայերի հետ կնքած բարեկամական դաշինքը և ձգտում էին գրկել նրանց անկախությունից , ստրկացնել և նվաճել Հայաստանը , բայց հանդիպելով հայ ժողովրդի հերոսական դիմադրությանը , հրաժարվում էին իրենց նենգավոր ծրագրերից :

Այս անգամ էլ Մանուել կայսրը փորձեց գնքի ուժով կտրել հայ ժողովրդի դիմադրությունը , բայց անհաջողության հանդիպելով ստիպվեց ճանաչել նրա անկախությունը :

Ընդունելով կայսրի առաջարկած պայմանները , Թորոսը իր շքամբով եկավ Մամեստիա քաղաքը : Կայսրը նրան ընդունեց մեծ պատիվներով :

Հայրենասեր զորավարը, բարձր պահելով իր ազգային արժանապատվութիւնը, կայսրի հետ խոսեց որպէս չպարտւած, անկախ երկրի իշխան: Նա ասաց, որ հայ ժողովուրդը ձգտում է լոկ ապրել ազատ և անկախ իր հայրենի երկրում և աչք չունի ուրիշների սեփականութեան վրա: Սակայն նա կաշառպանի իր հայրենիքը օտար նվաճողներից, երբ նրանք կփորձեն խլել նրա ազատութիւնը և անկախութիւնը:

Մանուէլ կայսրը, տեսնելով լեռնական ժողովրդի այդ քաջարի ներկայացուցչի անսասան վճռականութիւնը, ոսկի մատանով կնքված հրովարտակով թորոսին ճանաչեց Կիլիկիայի տիրակալ և շնորհեց նրան «Պանսեպաստոս», այսինքն «Մեծ իշխան» տիտղոսը:

Հայ ժողովուրդը հանդիստ շունչ առաւ երկարատե պատերազմներից հետո, որ նա հերոսաբար մղել էր իր ազատութեան և անկախութեան համար: Լեռներում ապաստանած ազգաբնակչութիւնը վերադարձաւ խաղաղ աշխատանքի: Դաշտերում դարձաւ հնչեց հայ ոսնչալարի դուլթաները: Քաղաքներում նորից ծաղկեցին առևտուրը և արհեստները: Վանքերում դարձաւ դաջաւ դրականութիւնը և մանրանկարչութիւնը: Այդ շրջանում է, որ հանդես եկաւ խոշորագույն միջնադարյան հայ բանաստեղծներից Ներսէս Շնորհալին:

Թորոս մեծ իշխանը 23 տարի երկիրը կառավարելուց հետո մեռաւ 1168 թվին: Նա հանդիսացաւ հայրենասեր զորավարի տիպար, ժողովրդական հերոս: Չնայած իր իշխանական ծաղումին Թորոսը համեստ էր և կարեկից: Պատանի հասակից նա երազել էր իր հայրենիքը օտար ճնշողներից ազատելու մասին: Այդ եղաւ նրա ամբողջ կյանքի միակ նպատակը, որը նա իրագործեց:

Փախչելով դերութիւնից, աննշան և անհայտ մարդու կերպարանքի տակ, Թորոսը եկաւ Սև լեռները և կարողացաւ իր հայրենասիրութեան կայծերով բորբոքել ժողովրդական ազատամբռութեան հրդեհը: Ազատութեան ձգտող ժողովուրդը դնաց թորոսի հետեից: Ժողովրդի օգնութեամբ նա հաղթեց թշնամիներին և հավերժացրեց իր անունը հայ ժողովրդի պատմութեան մեջ որպէս նրա ամենից հավատարիմ և քաջարի որդիներից մեկը, հմուտ և անվեհեր զորավար, հայրենասեր թորոս Լեռնի:

ԴԱՎԻԹ ԲԵԿ



Իլիկիայի հայոց Ռուբինյան իշխանութ-
թյան օրով հայ Ժողովուրդը մի քանի դար
պահպանեց իր անկախությունը: Չնա-
յած որ Կիլիկիան հեռու էր բուն Հայաստանից, սակայն արե-
մտյան և արևելյան Հայաստանի միջև կապը կտրված չէր:
Արևելյան Հայաստանի իշխանները ճանաչում էին Կիլիկիայի
գերիշխանությունը: Թորոսի եղբոր որդին՝ Լևոնը կրեց
«Հայոց թագավոր» տիտղոսը: Նրա օրով Կիլիկիայի հայկական
իշխանությունը հղորացավ և ընդարձակեց իր սահմանները: Մի
շարք պատերազմներում Լևոն թագավորը հաղթեց իր թշնամի-
ներին, որոնք հարկադրվեցին ճանաչել նրան որպես հայոց ան-
կախ պետության թագավոր: Լևոնն ուներ կանոնավոր բանակ,
որը նա սպառազինել էր եվրոպական ձևով: Պետական իշխանու-
թյան կազմակերպումը դրված էր կանոնավոր հիմքերի վրա:
Լևոն թագավորի օրով կտրվում էր հայկական դրամ: Մինչև
այսօր էլ մնացել են այդ դրամները նմուշները:

Կիլիկիայի հայկական թագավորությունը տևեց մինչև 14-րդ
դարի վերջերը:

13-րդ դարում մի նոր աղետ հասավ Հայաստանին, ինչպես
և Մերձավոր Արևելքի մյուս երկրներին: Թաթար-մոնղոլների
արշավանքն էր դա վայրագ Չինգիզ խանի գլխավորությամբ:
Մոնղոլները կատաղի թափով ներխուժեցին Հայաստան և Ան-
դերկովկաս, ավերեցին և կողոպտեցին երկիրը. նրանք անխնա
կոտորում էին աղամարդկանց և կանանց, ծերերին ու մանուկ-
ներին, այրում և ոչնչացնում էին դյուղերն ու քաղաքները:

Հայ, վրացի և աղվան (ներկայիս Ադրբեջան) ժողովուրդ-
ները օրհասական դիմադրություն ցույց տվին Չինգիզ խանի

հորդաններին, բայց ստիպվեցին տեղի տալ թշնամիներին թվական գերակշռության առաջ: Ժողովրդի մի մասն ամրացավ լեռներում և շարունակեց հերոսական դիմադրությունը:

Ձինդիկ խանի հեղեղանման արշավանքին հաջորդեցին ուրիշ արշավանքներ, ալիք-ալիքի հետևից: Սրեկեյան՝ Հայաստանն աժայցացավ, Ժողովուրդը գաղթեց մի մասը դեպի արևմուտք մյուս մասը ապաստանեց Հայկական անմատչելի լեռներում: Ղարաբաղի, Չանդեղուրի, Սասունի և այլ լեռնային շրջանների հայ իշխանները պահպանեցին իրենց անկախությունը: Սակայն նրանց ուժերը սակավ էին: Չկար մի հզոր ձեռք, որ միացներ այդ անջատ ուժերին:

Անի քաղաքը կործանվեց թաթարների Չարմաղան զորապետի հրամանով 1236 թվին: Սակայն Կիլիկիայի հայ իշխանությունը դեռևս պահպանում էր իր անկախությունը մինչև 1375 թիվը:

Կիլիկիայի Լևոն VI թագավորը եղավ հայոց վերջին թագավորը: Նրա օրով Բաղդադի Հյուսսին սուլթանը արշավեց Կիլիկիայի վրա մի հսկայական բանակով, որին միացան Եգիպտոսի սուլթանի զորքերը, սելջուկները և այլ անթիվ հրոսակներ:

Լևոն VI-ը հերոսական դիմադրություն ցույց տվեց թշնամու կատաղի հորդաններին, սակայն հայկական փոքրաթիվ զորքը պարտվեց: Սիս մայրաքաղաքում պաշարված հայոց թագավորը մարտում վիրավորվեց և ստիպվեց անձնատուր լինել: Եգիպտոսի սուլթանը խոստացավ պատվով ընդունել Լևոն թագավորին, բայց ուխտադրուժ կերպով գերի տարավ նրան Գահլե քաղաքը, որտեղ Լևոնը 7 տարի մնաց գերության մեջ: 1382 թվին եվրոպական պետությունների միջնորդությամբ Լևոն VI-ը ազատվեց գերությանից և անցավ Եվրոպա, որտեղ նրան պատվով ընդունեցին որպես հայոց գահազուրկ թագավորի: Անգլիայի Ռիչարդ II թագավորը և Ֆրանսիայի Կարլ VI թագավորը, որոնց միջև պատերազմ էր տեղի ունենում, հայոց Լևոն թագավորին նշանակեցին միջնորդ իրար հետ հաշտություն կայացնելու համար: Կաստիլիայի (Իսպանիա) թագավորը Լևոնին նվերեց Մադրիդ քաղաքը մինչև նրա մահը:

Հայոց վերջին թագավորն իր կյանքի վերջին տարիներն անց կացրեց Փարիզում, որտեղ և մեռավ 1393 թվին և թաղվեց Սեյիստիոյան վանքում: Փարիզում մինչև այսօր էլ մնում է Լևոն VI-ի գերեզմանը թագավորական դամբարանում:

14-րդ դարի վերջում նոր աղետներ եկան հայ ժողովրդի

գլխին: Արևելքից արշավեց Չինդիզ խանի հաջորդներից Լենկ-թիմուրը մոնղոլ-թաթարական հորդանքով, որոնք սոսկալի ավերումներ գործեցին ամբողջ Մերձավոր Արևելքում, Անդրկովկասում և Հայաստանում: 15-րդ դարում ուժեղացավ օսմանյան պետությունը, որի տիրապետության տակ ընկավ Հայաստանի մեծ մասը, իսկ մյուս մասը՝ Արևելյան Հայաստանը ենթարկվեց Պարսկաստանին: 17-րդ դարի սկզբում Պարսկաստանի Շահաբաս թագավորն ամայացրեց Հայաստանի մի շարք նահանգները և ժողովրդի մի մասին քեչ-տարավ Պարսկաստան:

Այս բոլոր աղետներից հետո հայ ժողովուրդը չկորցրեց իր ոգու արևմտությունը և ազատություն ձեռք բերելու հույսը: Հայաստանի լեռնային մասերում, հատկապես Ղարաբաղում և Զանգեզուրում, որոնց պատմական անունն է Արցախ և Սյունիք, իրենց անկախությունը չարունակեցին պահպանել հայկական փոքրիկ իշխանությունները, որոնք 16-րդ դարից սկսած կոչվում էին մելիքություններ:

Ապաստանած իրենց անմատչելի լեռներում, նրանք հերոսական դիմադրություն էին ցույց տալիս օտար նվաճողներին և երազում էին վերականգնել հայ ժողովրդի անկախությունը:

17-րդ դարում հզորացավ Ռուսաստանը: Հայ ժողովրդի հայացքն ուղղվեց դեպի ռուսական մեծ ժողովուրդը, որի օգնությամբ նա ցանկանում էր ազատագրվել սուլթանական և չահական լծից:

Ղարաբաղի մելիքները, հայկական կիսանկախ իշխանները, կապեր հաստատեցին Ռուսաստանի հետ: Հայկական մի պատգամավորություն 1659 թվին մեկնեց Մոսկվա Պետրոս I-ի հայր Ալեքսեյ թագավորի մոտ, նվեր տանելով նրան ադամանդադարձ, ոսկեղեն մի զահ: 18-րդ դարի սկզբին հայրենասեր գործիչ Խոբայել Օրին, ծագումով Զանգեզուրի մելիքներից, Եվրոպայում երկար ժամանակ ապարդյուն թափառելուց հետո, ուղեվորվեց Մոսկվա Մինաս վարդապետի հետ միասին: Նրա նպատակն էր օգնություն խնդրել Պետրոս I-ից հայկական անկախ պետությունը վերականգնելու և օտար նվաճողներին Հայաստանից դուրս քշելու համար: Այդ անկախ պետությանը հիմք էին ծառայելու Ղարաբաղի և Զանգեզուրի հայ մելիքությունները, որոնք ունեին ռազմական ուժ և հաջող կերպով հետ էին մղում սուլթանի և չահի բանակները: Պետրոս I-ը խոստացավ օգնել



Գալիք բեկ

Հայերին՝ իրենց հայրենիքն ազատագրելու գործում և Իսրայել Օրին շնորհեց զնդապետի աստիճան:

Հայ մեկիքները Ռուսաստանին ուղղած իրենց դիմումի մեջ հայտնում էին, որ եթե ռուսական զորքերը չարժվեն դեպի Կովկաս, հայկական և վրացական զորքը կմիանա նրանց և միահամուռ ուժերով հեշտությամբ կազատեն երկիրը օտար նվաճողներից:

1721 թվին ռուսական բանակը չարժվեց դեպի Կովկաս և գրավեց Դերբենդը: Հայերը և վրացիները ողջնչված այդ առաջխաղացումից, ոտքի ելան և որպես դաշնակից եղբայրական ժողովուրդներ ապստամբության դրոշ բարձրացրին պարսկական և օսմանյան բռնակալության դեմ: Վրաստանի Վախթանգ թագավորը և հայ մեկիքները, Գանձասարի Եսայի կաթուղիկոսի ղեկավարությամբ 40,000 զորքով Կուր գետի ափին սպասում էին ռուսական բանակին: Երկու եղբայրական ժողովուրդները ոգևորությամբ ողջունում էին միմյանց: Մոտ էր ազատության ժամը, սակայն քաղաքական դեպքերն այնպես դասավորվեցին, որ ռուսական առաջխաղացումը մի առ ժամանակ կանգ առավ: Բայց կապը չկտրվեց Ռուսաստանի հետ: 1723 թվին ռուսական զորքը գրավեց Բաքուն: Ռուսները մոտիկությունը հույս էք ներշնչում հայերին ու վրացիներին և սրտապնդում նրանց շարունակելու պայքարը:

Ղարաբաղի մեկիքները և լեռնական հայ ժողովուրդը հերոսական դիմադրություն ցույց տվին օսմանցիներին, որոնք ձգտում էին տիրել ամբողջ Անդրկովկասը, գրավել Բաքուն և արգելք լինել ռուսական բանակի առաջխաղացմանը: Իբրահիմ փաշայի բանակը չկարողացավ ընկճել ազատասեր հայ լեռնցիների դիմադրությունը: Հայկական զորքի հրամանատար Սվան Յուզբաշին մերժեց Իբրահիմ փաշայի առաջարկությունը միանալու օսմանցիներին: Քաջարի հայ մեկիքը չղավաճանեց Ռուսաստանին, որի հետ կապված էին հայ ժողովրդի ազատագրման հույսերը:

Սակայն Ղարաբաղի և Զանգեզուրի հայ իշխանությունների կացությունը դժվարանում էր: Արևմուտքից սպառնում էին օսմանցիները, իսկ հարավից Պարսկաստանը: Հայ մեկիքները թեև ունեին բավականաչափ զինված ուժեր, սակայն չկար մի ամուրձեռք, որ կարողանար միացնել այդ բաժան-բաժան ուժերը:

Հայ ժողովրդի համար աղետալի այդ օրերին Զանգեզուրի հայ իշխաններից մեկը՝ հայրենասեր Ստեփաննոս Շահումյանը միտք հղացավ դնալ Վրաստան, և Զանգեզուրի հայ ժողովրդի անունից խնդրել Վրաստանում հռչակված հայ դորալար Դավիթ բեկին՝ վերադառնալ հայրենիք և իր վրա վերցնել հայկական դորքի ընդհանուր հրամանատարությունը:

Դավիթ բեկը ծագումով զափանցի էր. պատանի հասակում հեռացել էր իր ծննդավայր Ղափանից և մեծացել Վրաստանում, դառնալով վրաց Վախթանգ թագավորի (Շահնավադ) անվանի դորավարը: Դավիթ բեկը թեև հեռու էր իր հայրենիքից, սակայն նրա հոգում ապրում էր վառ հայրենասիրությունը և վրեժ էր իր հարազատ ժողովրդին ճնշողների դեմ:

Հայ պատմադիրն այսպես է նկարագրում Դավիթ բեկին.

«Դավիթ ազնվական էր, բարեպաշտ, արդարադիր, ծանոթ դրականության, արխաիրտ երկայնամիտ խորհրդով, դորավոր խոսքով և գործով և վրեժխնդիր մեր ազգի թշնամիներին, ինքը և իր բոլոր հետևորդները»:

Դավիթ բեկը սիրով ընդունեց հայրենիքի հրավերը, այն հայրենիքի, որը վտանգի մեջ էր և կարիք ուներ նրա օգնությանը: Վրաց թագավորը հոժար կամքով թուլլատրեց քաջ դորավարին վերադառնալու իր ծննդավայրը, խրախուսեց և օգնեց նրան ամեն բանով:

Դավիթը մենակ չէր, նրա հետ կային մի խումբ հայրենասերներ, որոնք անհամբեր սպասում էին այն օրվան, երբ վրեժ կլուծեն հայ ժողովրդի կրած տառապանքների և ճնշումների համար:

Դավիթ բեկն իր քառասուն խիզախ հետևորդներով ճանապարհ ընկավ դեպի Հայաստան և 1722 թվին հասավ Սիսիան, որը Զանգեզուրի կենտրոնն էր: Մի գեղեցիկ դաշտավայրում, ուր դանվում է Ուչ-թեփե (երեք գագաթ) բլուրը, Դավիթ բեկը հաստատեց իր առաջին կայանը:

Շուտով ամեն կողմից Դավիթ բեկի շուրջը հավաքվեցին զինված մարտիկներ, մոտ չորս հարյուր մարդ, բոլորն էլ ընտիր, քաջարի ռազմիկներ, որոնք նեղվել և տառապել էին օտար նվաճողի ճնշումներից, մարդիկ, որոնք իրենց անձը նվիրել էին հայրենիքի ազատագրության գործին, մարդիկ, ինչպես ասում

է պատմագիրը, որոնցից ամեն մեկը հալածում էր հարյուրնե-
րի, երկուսը՝ հազարի:

Առաջինը Դավիթի մոտ եկավ Չավնդուրի Թորոս իշխանը,
որին նա նշանակեց իր դավառի զորքերի հրամանատար, տալով
նրան որպես օգնական քաջ Բայրազուրին: Այնուհետև եկան
իրենց զորքով ուրիշ մեկիքներ Ղարաբաղի և Չանդեզուրի դա-
նազան կողմերից: Դավիթ բեկի զորքերի թիվը հասավ երկու
հազարի:

Հայրենասեր զորավարը դասավորեց իր զորքերը, գունդ առ
գունդ, նշանակեց հրամանատարներ, հարյուրապետներ և հիս-
նապետներ պատվիրելով նրանց պահպանել խիստ ուղմական
կարգ ու կանոն: Դավիթ բեկը սպարապետ նշանակեց Մխիթար
զորավարին, որը վերին աստիճանի հանդուգն և քաջ մարդ էր:
Դավիթ բեկի հետ էր նաև քահանա Ռազմիկ տեր-Ավետիքը, որը
իր քաջություններով ահ ու սարսափ էր տարածել թշնամիների
վրա:

Պարսկական երեք խաններ, լսելով, որ Չավնդուրի Թորոս
իշխանը միացել է Դավիթ բեկին, միացյալ ուժերով, թվով մոտ
18 հազար մարդ, հարձակվեցին Չավնդուրի վրա: Նրանք նպա-
տակ ունեին իր բնի մեջ խեղդել հայերի ազատագրական շար-
ժումը:

Թորոսը դիմեց ուղմական խորամանկություն: Տեսնելով որ
թշնամու ուժերը շատ են, նա իր զորքերի կեսը դադարի կեր-
պով ուղարկեց հակառակորդի թիկունքը դարան մտնելու, իսկ
մյուս կեսով զատկի դիմեց, երբ թշնամին բոլորովին չէր սպա-
սում հանկարծակի դրոհեց խաների զորքի վրա: Թշնա-
մին չդիմացավ հարվածին և սկսեց նահանջել. այդ ժամանակ
թիկունքից խիեցին դարան մտած Թորոսի զորքերը, շատերին
կոտորեցին, իսկ մնացածները փախան և ցիր ու ցան եղան:

Հայկական զորքի այս առաջին հաղթանակը հսկայական
տղավորություն գործեց ամենքի վրա: Դավիթ բեկի կազմակեր-
պած զորքը ցույց տվեց իր մարտունակությունը և ուղմական
հնարամտությունը: Համեմատաբար փոքրաթիվ ուժերով նա
պարտություն մատնեց այդ ժամանակվա պաշտաններում խոշոր
մի բանակ:

Պարսիկ խաները զղացին, որ մի նոր ուժ է հանդես եկել,
որը սպառնում է իրենց իշխանությունը: Բռնակալները վճռե-
ցին ոչնչացնել այդ ուժը:

Ասլամադ Ղուլի խանը, որը պարսից ամենաուժեղ խաներից

մեկն էր և ամբողջած էր Զեվու բերդում, հալածեց մեծ թվով զորքեր, խառնե՛հաղանձ մի ամբոխ, որի թիվը հասնում էր տասնյակ հազարների:

Հայկական զորքի թիվը այդ ժամանակ մոտ 4 հազար էր: Դավիթ բեկը հրամայեց պաշարել Զեվու բերդը, որը շատ բարձր էր ու անմատչելի: Պաշարումը տևեց երկու օր, բայց բերդը մնաց անառիկ: Այդ ժամանակ Մխիթար սպարապետը և տեղ Ավետիքը անձամբ, մի բուռ քաջերի գլուխն անցած, կարողացան թափանցել ամրոցի ներսը և անակնկալ գրոհով իրարանցում գցեցին պաշարվածների մեջ: Դավիթ բեկը դրսից ուժեղացրեց հարձակումը, նրա ռազմիկները պարիսպների վրայով ներս խուժեցին: Ասլամազ Դուլի խանը հաղիվ կարողացավ փախչել մի գաղտնի անցքով:

Զեվու անառիկ բերդի զրավումից հետո Դավիթ բեկը շարունակեց ռազմական զործողությունները թշնամիների դեմ, զուրս փոնդելով բռնակալ խաներին հայրենի երկրից: Նա կառուցեց Հայիճորի բերդը, որը դարձավ նրա հիմնական բնակավայրը և ռազմական կենտրոնը:

Մի քանի տարի շարունակ Դավիթ բեկն իր փոքրաթիվ զորքով ջարդում էր թշնամու գերակշիռ ուժերին: Նախիջևանի խանը 14 հազար զորքով մտադիր էր արշավել Դավիթ բեկի վրա: Մակայն հայ զորավարը շտապեց նախահարձակ լինել: Նախիջևանի գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում խանի զորքը պարտություն կրեց:

Բարկուշատի Ֆաթալի խանը 12 հազար զորքով հարձակվեց Չամչուրի վրա: Թորոս իշխանը բռնեց կիրճերը, և երբ խանի զորքը մտավ Չամչուրի սահմանը, պարանամուտ հայ լեռնցիները հանկարծակի կրակ բաց արին թշնամու վրա և խուճապի մատնեցին նրան: Հակառակորդը փախավ, տալով մեծ կորուստներ:

Այդ ճակատամարտից հետո Թորոս իշխանը Դավիթ բեկի հրամանով պատրաստվեց արշավել Օրդուբադ քաղաքի վրա: Հայ մելիքներից մեկը՝ Մելիք Ֆրանգյուլը, որ դավաճանել էր հայրենիքին և ծածուկ միացել թշնամիներին, լուր ուղարկեց Թորոսին, թե Ֆաթալի խանը սպասում է նրա հեռանալուն, որպեսզի հարձակվի Չամչուրի վրա: Մելիք Ֆրանգյուլը առաջարկում էր Թորոսին նախահարձակվել Բարկուշատի վրա և խուստանում էր իր զորքով օգնել նրան: Թորոս իշխանը հավատաց

Մեկիք Ֆրանդյուլին, որի դավաճանություն մասին նա ոչինչ չգիտեր: Վեց հազար զորքով նա քայլեց դեպի Բարկուչատ: Նրան միացավ Մեկիք Ֆրանդյուլը իր ձեռքի տակ եղած զորքով, որի թիվը հասնում էր 2000-ի:

Փաթալի խանը 18 հազարանոց բանակով հանդարձակի հարձակվեց Թորոսի վրա: Հայկական զորքը կատաղի դիմադրություն ցույց տվեց թշնամուն: Խանի զորքերը չդիմացան ուժեղ հարվածին և սկսեցին փախչել: Թորոսը սկսեց հետապնդել նրանց: Այդ ժամանակ դավաճան Ֆրանդյուլը կարճ ճանապարհով մարդ ուղարկեց Փաթալի խանին, ասելով նրան «մի՛ փախչիր, ես քո կողմն եմ և թիկունքից կխփեմ Թորոսին»: Փաթալի խանը հեռ դարձավ: Թորոսի զորքը մնաց երկու կրակի մեջ: Սակայն չարունակեց հերոսաբար կռվել: Հայրենիքի դավաճան Ֆրանդյուլը, կուրացած փառասիրությունից և նախանձից, անարդ կերպով թիկունքից հարվածեց իր հայրենակիցներին և դարձավ Թորոս իշխանի պարտություն և մահվան պատճառը: Անհավասար մարտում հայերը տվին մոտ երեք հազար սպանված, քաջի մահով ընկավ և ինքը Թորոս իշխանը, Դավիթ բեկի ամենից ականավոր և խիզախ զորավարներից մեկը:

Դավաճանի անունը ծածկվեց անարգանքի և խայտառակության նախատինքով: Մինչև աշտոր էլ Զանգեզուրում հիշվում է Մեկիք Ֆրանդյուլի անունը որպես դավաճանության սև ամոթի օրինակ: Ծերունիները Մեկիք Ֆրանդյուլի անունը տալիս են, երբ խոսք է լինում հայրենիքի սոսոր դավաճանների, պատմության մեջ անարգանքի սյունին դամբած արարածների մասին, ինչպիսիք եղել են Վասակ Սյունին, Վեստ-Սարգիսը և ուրիշները: Ըստ ավանդության դավաճան Մեկիք Ֆրանդյուլը մեռավ անարդ մահով հայրենասերների գնդակից: Այդ մասին պատմում է Բաֆֆին իր նշանավոր «Դավիթ բեկ» վեպում:

Դավիթ բեկը մեծ ցավ զգաց, լսելով իր անվանի զորավարներից մեկի՝ քաջ Թորոս իշխանի մահը և հայերի կրած մեծ կորուստները դավաճան Մեկիք Ֆրանդյուլի պատճառով: Վրեժի ցատտում բարբոթվեց նրա սրտում, սակայն նա հավասարակշռված մարդ էր, սառնարյուն ռազմագետ: Դավիթ բեկը հետևում էր թշնամիների ռազմական գործողությունների ընթացքին՝ ընտրելու համար ջախջախիչ հարված հասցնելու բոլոր:

Հետախույզները լուր բերին, որ պարսիկներն ահադին բաղմունքամբ շարժվեցին դեպի Մեղրի և չուտով պաշարեցին այդ

փոքրիկ քաղաքը: Դավիթ բեկն իր օգնական Ստեփաննոս Շահումյանին և Բայինդուր հրամանատարին 2000 հոգուց բաղկացած զորքով ուղարկեց օգնելու պաշարված մեղրեցիներին, որոնք քաջությամբ դիմադրում էին թշնամիներին:

Ստեփաննոս Շահումյանը և Բայինդուրը գիշերով հասան Մեղրի, երբ արդեն թշնամիներին հաջողվել էր գրոհով վերցնել փոքրիկ թաղը, որը դեռավ ըստանված է քաղաքի մյուս մասից: Մեղրեցի հայերը քանդեցին կամուրջը և գետանցը պաշեցին թշնամու հարձակումներից: Թշնամու զորքերը մնացին փոքրիկ թաղում: Նրանք սպասում էին Արաքս գետի մյուս ափից եկող օգնական մեծ ուժերի: Հայկական զորքը և տեղական բնակիչները մարտի նախաձեռնությունը վերցնելով իրենց ձեռքը աջից և ձախից հարձակվեցին հակառակորդի վրա: Թշնամին հակառակահայկական կորուստներ տվեց, պատմադրի տակով միայն սպանվածների թիվը հասնում էր 11 հազարի: Այս փայլուն հաղթանակով Դավիթ բեկը լուծեց Չալնդուրի պարտություն և Թորոս իշխանի սպանությունը վրեժը:



Դավիթ բեկը այսպիսով ամբողջ Չանդեղուրը ազատեց բրտնակալ խաների իշխանությունից, երկիրը մի պահ խաղաղ չունչ քաղեց, հնարավորություն տալով զարգացնելու առևտուրը և արհեստները: Այդ ժամանակ Ղափանի, Սիսիանի, և այլ շրջանների հայ վաճառականները հարաբերություն ունեին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի նշանավոր առևտրական կենտրոնների, ինչպես նաև Սպահանի և Հնդկաստանի հետ, միջնորդի դեր կատարելով Արևելքի և Արևմուտքի միջև: Հարուստ հայ վաճառականները Ռուսաստանի վրայով (Կասպից ծով, Աստրախան, Մոսկովա, Արխանգելսկ) կապ էին պահպանում Արևմտյան Եվրոպայի հետ, այլ ապրանքների թվում Եվրոպայից բերելով նաև գինք ու ուղեմամթերք: Ահա այդ գինքերով էր ղինված Դավիթ բեկի զորքը: Հայ վաճառականները, մի պահ մոռացած իրենց անձնական շահերը, զոհելով դրանք հայրենիքի ընդհանուր շահերին, հայկական զորքին մատակարարում էին եվրոպական նորագույն տիպի (այդ ժամանակի համար) հրացաններ, սվիններ և այլ սպառազինություն, որոնք ավելի գերազանց էին, քան պարսկական սպառազինությունը: Ահա այն պատճառներից մեկը,

Թե ինչու Դավիթ բեկի զորքը համարյա միջոտ հաջողություն էր ունենում թվով անհամեմատ գերակշիռ հակառակորդի դեմ :

Սակայն դադարը կարճատև եղավ : Արեմուտքից դալիս էր ավելի մեծ վտանդ, քան չահական Պարսկաստանը. դա օսմանցիներն էին : Օսմանյան Թյուրքիան ձգտում էր կասեցնել ուսաների առաջխաղացումը դեպի հարավ, դրա համար սուլթանն ուզում էր գրավել Կասովից ծովի ափերը : Պարսկաստանն այդ շրջանում թուլացած լինելով, չէր կարող դիմադրել հզոր Ռուսաստանին : Հայ ժողովրդի համակրությունը Ռուսաստանի կողմն էր : Դավիթ բեկն իր քաջերով մի պատնեշ էր օսմանյան Թյուրքիայի դեմ : Դրա համար էլ սուլթանը ուզում էր խորտակել այդ պատնեշը :

1726 թվին օսմանյան բանակը Արդուլլահ փաշայի հրամանատարությամբ զբաղեց Երևանը, Նախիջևանը և Թավրիզը : Երևանում տեղական ազդարնակությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց օսմանցիներին, բայց ընկճվեց ուժեղ հակառակորդի կողմից : Օսմանցիների մի այլ խոշոր բանակ հաջի-Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ շարժվեց դեպի Սյունիք (Ջանդեղուր) : Թշնամու զորքերի թիվը հասնում էր 70 հազարի, հեծելազոր և հետևակ : Դավիթ բեկն իբրև փորձված ռազմադեստ, գիտեր, որ հնարավոր չէ փոքրաթիվ ուժերով ճակատ առ ճակատ դուրս գալ ուժեղ հակառակորդի հետ : Օսմանյան բանակը զբաղեց Ղափանը :

Դավիթ բեկը չսպասեց թշնամու բազմությունից և ամրացավ Հալիձորի բերդում : Նա վճռեց մինչև վերջին շունչը դիմադրություն ցույց տալ օտար նվաճողներին : Դավիթ բեկի հետ էին իր զորքի քաջ հրամանատարները՝ Մխիթար սպարապետը, Ստեփաննոս Շահումյանը, տեր Ավետիքը, Մելիք Փարսաղանը և ուրիշները : Նա ռազմական խորհուրդ գումարեց և ասաց ժողովականներին. «Մենք չենք կարող խոնարհվել թշնամիների առաջ, որովհետև գիտենք, թե ովքեր են նրանք, մեզ մնում է կռվել մինչև վերջը և խորտակել թշնամու ամբարտախանությունը» :

Բոլորը միաբերան պատասխանեցին իրենց քաջարի գործվարին. «Կկռվենք մինչև վերջին շունչը, իսկ եթե հասել է մեր կյանքի վախճանը, կմեռնենք պատվով» :

Դավիթ բեկը ավելի ամրացրեց Հալիձորի բերդը, հավաքեց

րաժակա՛ն քո՛նակութ՛յամբ պաշարեղէն, հարմար դիրքերում
դատաւորեց իր զորքերը, որոնց թիւը ընդամենը 450 էր:

Հմուտ և խիղախ զորավարի առաջին զործն եղավ հետա-
խուզել թշնամու ուժերը, որոնք չարժւում էին դեպի Հալիճոր:
Նա 160 հոգուց բաղկացած մի ջոկատ ուղարկեց բռնելու գե-
տանցը, որպէսզի թույլ չտա թշնամուն անցնել գետը: Երկու օր
չարունակ այդ փոքրաթիւ ջոկատը տոկունութ՛յամբ և արիու-
թյամբ կասեցրեց հակառակորդին, բայց երրորդ օրը թշնամի-
ներն անցան գետը և շրջապատեցին Հալիճորը: Վեց օր ան-
դադար թշնամին թնդանոթներով ուժեղացնում էր հալիճորի
բերդը: Սակայն բերդի պաշտպաններն անդդուեցին էին: Պա-
րիսպների վրայից նրանք անխնա զնդակոծում էին թշնամինե-
րին, մեծ կորուստ պատճառելով նրանց, իրենք չառ չնչին կո-
րուստներ տալով:

Օսմանցի փաշան տեսալ, որ անհնար է ընկճել Դավիթ դո-
րավարի դիմադրութ՛յունը: Նա հրամայեց վերելակներ և սան-
դուխներ կառուցել ու նրանց միջոցով գրոհել բերդի պաշտպան-
ներին վրա: Երեք կողմից սկսվեց կատաղի գրոհը: Գոռում-դո-
ջյուններով թշնամիները բարձրանում էին վերելակների վրա,
բայց ցած էին տապալւում բերդապահները զնդակներից, իսկ
ովքեր հասնում էին պարիսպների վրա, կոտորվում էին թրի և
սվինի հարվածներով: Սակայն գրոհը չէր դադարում, թշնամի-
ների նոր ալիքներ գալիս էին իրար հետևից և նրանք իրենց
դիակների կույտերի վրայով բարձրանում էին դեպի բերդի պա-
րիսպները: Պաշարվածների դրութ՛յունը ծանրանում էր, բայց
նրանք չէին հուսահատվում:

Դավիթ բեկը հրամայեց հնչեցնել եկեղեցու զանգերը: Նա
վճռել էր մի հանդուգն քայլ կատարել: Մխիթար սպարապետին
և տեր-Ավետիքին նա հանձնեց 300 մարտիկներ, որոնք երեք
մասի բաժանված պետք է հանկարծակի դուրս գային բերդի
զաղտնի դռնից և գրոհեն թշնամիներին վրա:

Մխիթար սպարապետը հավաքեց իր քաջերին և ասաց նրանց.
«Եթե հասել է մեր վախճանը, ապա քաջութ՛յամբ մեռնենք,
սովելի լավ է պարիսպներից դուրս՝ թշնամիներին կոտորելով
մեռնենք արիութ՛յամբ, քան թե աշտուղ մեր աչքի առաջ տես-
նենք մեր ընտանիքների և բարեկամների կոտորածը»:

Ապա երեք հարյուր քաջեր դուրս գալով զաղտնի դռնից
կատաղի սաստկութ՛յամբ գրոհեցին թշնամիներին վրա: Գրոհն

անսպասելի էր: Փաշայի զորքերը անասելի խուճապի մատնվեցին և սկսեցին աղաղակելով հետ փախչել: Խուճապն անցավ պաշարողներին մյուս շարքերին, որոնք օղակաձև շրջապատել էին ամրոցը:

Դավիթ բեկի անունը բավական էր նրանց վրա ահ ու սարսափ տարածելու համար, որովհետև նրանցից շատերը բազմիցս տեսել և իրենց կաշվի վրա դեպքել էին հայ զորավարի և նրա մարդկանց քաջազործությունները:

Թշնամու բանակում տիրող խուճապի և իրարանցման ժամանակ Դավիթ բեկն իր մոտ մնացած ռազմիկներով դուրս եկավ Հալիճորից և սկսեց հետապնդել փախչողներին, անխնա կոտորելով Մուստաֆա փաշայի զորքերին, որոնք քիչ առաջ վստահ էին իրենց հաղթանակի վրա: Թշնամին Ձանդեղուրի այդ անառիկ կիրճերում թողեց մոտ 12 հազար դիակ: Մեծաքանակ ավար և 148 դուռներ ընկան հայրենիքի հերոս պաշտպանների ձեռքը: Ղափանը մաքրվեց թշնամիներից, որոնք նահանջեցին և ամրացան Մեղրիում:

Օսմանյան բանակի չարաչար պարտություն լուրը հասավ Օրդուբադ, որտեղից օսմանցիների թարմ օգնական ուժեր եկան Դավիթ բեկից վրեժ լուծելու համար: Մեղրիում կենտրոնացվեց մոտ 22 հազար զորք:

Դավիթ բեկը Մխիթար սպարապետին և տեր Ավետիքին փոքրաթիվ զորքով ուղարկեց հետախուզելու թշնամուն և միանալով մեղրեցիներին գիշերով հանկարծակի դրոհել քաղաքի վրա: Մեղրեցիները, թողնելով քաղաքը, թաքնվել էին այգիների մեջ: Մխիթար սպարապետը և տեր Ավետիքը հավաքեցին նրանց, զենք չունեցողներին զենք բաժանեցին և ծածուկ դասավորեցին Մեղրու բարձունքներում, պատվիրելով դարան մտնել և աղդանչանը տալուն պես հարձակվել քաղաքի վրա: Իսկ իրենք մի քանի հոգով, ծալոված, զենքերի վրա քաղաքացու զգեստ հագած, քաղաք մտան:

Առավոտը դեռ լույսը չբացված Մխիթար սպարապետը և տեր Ավետիքը իրենց մարդկանցով քաղաքի փողոցներում իրարանցում, աղմուկ-աղաղակ բարձրացրին, սկսեցին կրակել և սպանել պահակներին, թուրքերին լեզվով բարձրաձայն դռնելով, թե Դավիթ բեկի զորքը մոտ է քաղաքին և չուտով հարձակվելու է օսմանցիների վրա: Այգիներում դարանամուտ գինյաձև մեղրեցիները, լսելով քաղաքում տիրող աղմուկն ու աղաղակը, իջան

իրենց բարձունքներից և հարձակվեցին խուճապի մատնված թըշնամիներին վրա: Տիրեց անասելի շփոթ: Օգտվելով դրանից Մխիթար սպարապետը և տեր Ավետիքը իրենց մարդկանցով շտապեցին դեպի Արաքս գետը տանող ճանապարհն, որն անցնում էր մի նեղ և երկար կիրճի միջով, մի կողմն ունենալով հորդահոս գետը, իսկ մյուս կողմը՝ մի բարձր քարաժայռ: Դա օսմանցիների նահանջի միակ ճանապարհն էր, որի վրա շուտով երևացին փախչողների առաջին խմբերը: Մխիթարը և տեր Ավետիքն իրենց քաջերով բռնեցին այդ կիրճը, և երբ թշնամիները մոտեցան, սկսեցին գնդակների տարափ տեղալ նրանց վրա: Փախչողներից շատերը նետվեցին գետը իրենց կյանքը փրկելու համար, բայց զոհ դարձան գետի կատաղի ալիքներին: Շատ քչերին հաջողվեց անցնել Արաքսի մյուս ափը:

Մխիթար սպարապետը և տեր-Ավետիքը հաղթական վերադարձան Մեղրի, որն արդեն մաքրված էր թշնամիներից, որոնք թողել էին մեծ քանակությամբ ռազմական ավար, ձիեր և ջուրիներ, ինչպես նաև տեղական ժողովրդից հարկ հավաքելու երկու հազար փաստաթղթեր: Այդ բոլոր թղթերը, որ այժմ արդեն անպետք էին, հանդիսավոր կերպով այրվեցին:

Սակայն թշնամին համառությամբ ձգտում էր հասնել իր նպատակին, այսինքն ջախջախել Դավիթ բեկի զորությունը, որը մեծ խոչընդոտ էր օսմանցիների նվաճողական քաղաքականության դեմ:

Դավիթ բեկը արթուն հսկում էր թշնամու շարժումների վրա: Նա անձամբ եկավ Մեղրի և վերցնելով իր հետ Մեղրիի և Չալնդուրի հայ ռազմիկներին, շարժվեց դեպի Կարճևան և իր բանակը հաստատեց այնտեղ: Կարճևանում հայ զորավարը զորահանդես կատարեց, որից հետո հրամայեց մի քանի ջոկատ գործուղարկել Օրդուբադ քաղաքի վրա, որտեղ գտնվում էր օսմանցիների կայազորը:

Այդ ժամանակ պարսից թահմադ շահը, տեսնելով օսմանցիների առաջխաղացումն իր երկրի վրա, հրամայել էր իր խաներին դուրս գալ օսմանյան զորքի դեմ: Նա վախենում էր, որ օսմանցիները Դավիթ բեկի ուժը խորտակելուց հետո, կարող են դրսովել Պարսկաստանին պատկանող հողերը և իրենց իշխանությունը տարածել նաև Անդրկովկասի վրա: Դրա համար էլ նա ժամանակավորապես փոխել էր իր քաղաքականությունը Դավիթ բեկի նկատմամբ: Շահը նույնիսկ ստիպված էր եղել ճանաչել

հայ զորավարի իշխանությունը Արաքսից մինչև Կուր գետը տարածվող տերիտորիայի վրա:

Պարսիկ խաները, չափի հրամանով, պետք է ենթարկվեին Դավիթ բեկին, ընդհանուր թշնամու, այսինքն՝ օսմանցիների դեմ կռիվելու համար: Բայց խաները չառ թույլ մասնակցություն էին ցույց տալիս օսմանցիների դեմ մղվող պատերազմին և չառ անդամ թողնում—փախչում էին մարտից: Օսմանյան զորքը ամենուրեք ջախջախում էր պարսից խաների անկանոն զորքերին:

Դավիթ բեկի զորքերը գեշերով հանկարծակի զրոհեցին Օրդուբադի վրա: Օսմանցիները մոտ 3 հարյուր սպանված տալով փախան քաղաքից և դիրքեր բռնեցին քաղաքից քիչ հեռու: Քաղաքը զրավող ջոկատը կարծելով թե վտանդն անցել է, այլևս առաջ չչարժվեց. զինվորները խլելով մեծ քանակությամբ ավար, սկսել էին ուրախանալ և կերուխումով զբաղվել: Մինչդեռ սեղան նստած քեֆ էին անում, վրա հասավ Դավիթ բեկը և սաստիկ դայրացավ նրանց վրա. «Թշնամին քաղաքի դռների մոտ է, իսկ դուք անհոգ նստած ուտում—խմում եք»:

Անմիջապես վեր կացան, հեծան ձիերը և հարձակվեցին օսմանցիների վրա, իսկ սրանք կարծելով թե պարսիկան զորքն է դալիս, ընդ առաջ եկան և պատրաստվեցին պատերազմի, բայց երբ իմացան, թե Դավիթ բեկի զորքն է, հեռու հեռանացի ու փախան: Հայկական զորքը զրավեց Ագուլիսը:

Լսելով այս պարտությունների լուրը Մուստաֆա փաշան մեծ բանակ կազմեց, հեծյալ և հետևակ և կենտրոնացրեց Գողթան դավառի (Ագուլիսի) սահմանների վրա: Օսմանյան զորքը սկսեց չարժվել գեպի Զանգեզուր:

Դավիթ բեկը, որպես հմուտ զորավար փոխեց իր ռազմական տակտիկան: Նա գիտեր, որ իր փոքրաթիվ զորքով դժվար է դիմադրել օսմանյան նոր հակադրական բանակին: Դրա համար էլ նա սկսեց նահանջել և պարտիզանական կռիվներ մղել թշնամու դեմ: Առանձին մանր ջոկատներով հայ ռազմիկները հարձակվում էին օսմանցիների վրա և զգալի կորուստներ պատճառում նրանց:

Դավիթ բեկը իր զորագնդով նորից ամրացավ Հալեծորի անառիկ բերդում, որը այս անգամ էլ պաշարվեց թշնամիների կողմից: Հայկական զորքը հերոսաբար դիմադրում էր պաշարողներին, սակայն պաշարի և ռազմածիքների պակասը սկսել էր հուսահատեցնել բերդի պաշտպանների մի մասին: Քաջարի զո-

բաժնարար այս անգամ էլ մտածեց խիզախ ելույթով չփոթություն դրել թշնամիների մեջ, սակայն նախքան այդ անելը դիմեց մի հնարագետ միջոցի: Նա հավաքել տվեց Հալիձորում եղած բոլոր մատակ ձիերը, թվով մոտ 60 դուլա և հրամայեց գլխերով բաց թողնել նրանց թշնամու բանակի մեջ: Այդպես էլ արին: Թշնամու բանակում մեծ իրարանցում ընկավ, ձիերը կատաղեցին, սկսեցին ծառս, ծառս լինել, խրինջալ և չփոթության մատենել զորքին: Կտրտելով սանձերը և վզկապները, ձիերը ոտքի տակ էին տալիս վրանները, քաջիններով սպանում մարդկանց:

Այդ ժամանակ հնարամիտ և քաջարի զորավարը, տեսնելով, որ հասել է հարմար բոլեն, անձամբ առաջնորդեց իր քաջերին, որոնք դուրս եկան բերդից և դրոհեցին խուճապի մատնված թշնամու վրա: Դավիթ բեկն իր օրինակով խանդավառում էր հայրենիքի պաշտպաններին, որոնք ջախջախիչ հարված հասցրին դուռդագամ օսմանցիներին:

Դավիթ բեկը նորեց մաքրեց իր հայրենի լեռները թշնամիներից: Օսմանյան զորքը ջախջախված գլխիկոր հեռացավ Զանգեզուրի սահմաններից: Հայ զորավարը թշնամիներից մաքրեց նաև Ագուլիսը: Երկիրը կրկին ազատ շունչ քաշեց:

Պարսից չահը, լսելով Դավիթ բեկի հաղթանակները օսմանցիների վրա, շատ ուրախացավ, որովհետև այդ ժամանակ թըշնամություն կար պարսիկների և օսմանցիների միջև: Շահն ընդունեց և ճանաչեց Դավիթ բեկի իշխանությունը Մյունխաց աշխարհի (Զանգեզուր) վրա և իրավունք տվեց նրան դրամ կտրելու, տալով նրան «Իշխանաց իշխան» տիտղոսը:

Հայրենասեր զորավարը մասամբ հասավ իր նպատակին: Նա կարողացավ օտար բռնակալների լծից ազատել Հայաստանի մի մասը, սակայն մյուս մասերը դեռևս հեծում էին օսմանյան և պարսկական լծի տակ:

Մի շարք փառավոր հաղթանակներից հետո Դավիթ բեկը մտադիր էր զբաղվել հայրենի երկրի բարեկարգությամբ, խաղաղ աշխատանքի հնարավորություն տալով ժողովրդին, բայց հիվանդացավ և վախճանվեց 1728 թվին՝ Հալիձորի պանծալի ամբողջում, որը այնքան հերոսական դիմադրություն էր ցույց տվել թշնամու անթիվ հորդանքերին:

Դավիթ բեկը մեծատաղանդ և հայրենասեր զորավարի տիպարն է։ Նրա քաջության և հայրենասիրության հիշատակը անջնջելի է մնացել բոլոր հայերի սրտում։ Նա կարողացավ փոքրաթիվ զորքով, որի թիվը երբեք չի անցել 7 հազարից, կռվել թշնամու հսկայական բանակների դեմ, որոնց թիվը հասնում էր երբեմն 70 հազարի։ Անկասկած նրա հաղորդություններին նպաստում էին հայոց անմատչելի լեռները, նեղ ձորերն ու կիրճերը. սակայն ոչ մի լեռ, ոչ մի ամբուրություն չի կարող կասեցնել թշնամուն, եթե պաշտպանների ոգին թուլացել է, եթե կայուն չէ արիության, կարգապահության և հայրենասիրության ոգին։

Դավիթ բեկը անողորմ կերպով պատժում էր անհնազանդներին, դասալիքներին և հայրենիքի թշնամիներին։ Այսպես օրինակ, նա չարաչար պատժեց իր հավատն ուրացած Մելիք-Դավթին, որը դավաճանելով իր հայրենիքին՝ դուրս եկավ հայրենիքի պաշտպանների դեմ։ Հայրենասեր զորավարը հրամայեց բռնել դավաճան մելիքին և կտրել նրա գլուխը։ Նա կոչ էր անում բոլորին համախմբվել և դուրս գալ թշնամու դեմ, խսկ ուղքեր չէին հնազանդվում, կամ լքում էին մարտադաշտը, ենթարկվում էին ամենախիստ պատիժների։ Նա չէր խնայում նույնիսկ իր մերձավոր զինակիցներին, եթե նրանք չէին կատարում ռազմական հրամանը։ Երբ իր զորքի հրամանատարներից մեկը՝ Պասը երկու հազար ռազմիկներով չկարողացավ զիմազրել թշնամուն և առանց իր հրամանի նահանջեց՝ Դավիթ բեկը խիստ զայրացավ Պասի վրա, համարեց նրան պատերազմի դաշտից փախուստ տվող և հրամայեց գլխատել նրան։

Դավիթ բեկը օժտված էր ռազմագետի խոշոր քնդունակություներով. նա կարողացավ կազմակերպել և սպառազինել այնպիսի մի ուժ, որը ահ ու սարսափ տարածեց հայրենիքի թշնամիների վրա։ Հայրենի լեռներում Դավիթ բեկը հաջողությամբ վարեց պարտիզանական մարտեր, հնարազարդությամբ և խիզախությամբ պարտության մատնելով խաների և օսմանյան փաշաների խոշոր բանակներին։

Իր ռազմական գործողություններով Դավիթ բեկը հող պատրաստեց հայրենիքի ապագա ազատագրման համար։ Նրա օրինակով հետագայում հայ լեռնականները արիարար շարունակեցին

պայքարը օտար նվաճողների դեմ մինչև 18-րդ դարի վերջերը, մինչև որ ռուսական զորքը հյուսիսից շարժվեց դեպի Անդրկովկաս և 19-րդ դարի սկզբներին՝ ազատագրեց այն պարսկական և օսլթանական լծից:

Դավիթ բեկը Սյունյաց աշխարհի լեռներում վառ պահեց հայ ժողովրդի ազատութեան և անկախութեան կայծերը: Հայ ժողովրդի բարեկամ մեծ Ռուսաստանի օգնութեամբ այդ կայծերը բորբոքվեցին, մեր հայրենիքը ազատագրվեց բռնակալների դարավոր լծից և վերստացավ իր անկախութեանը և ազատութեանը:

Ու այսօր ահա պատմական այդ մեծ նվաճումները, հայրենիքի պատիւն ու անկախութեանը, մեր բաղժադարյան հարուստ հոգւտուրան են պաշտպանում ազատասեր հայ ժողովրդի զավակները, և դբայրական ժողովուրդների հետ կողք-կողքի, հերոսաբար մարտնչելով մարդկութեան անարդ և ոխերիմ թշնամու դեմ՝ մեր քաջ նախնիների օրինակով:

Յ Ա Ն Կ

1. Մուշեղ Մամիկոնյան	.	.	.	.	.	3
2. Վարդան Մամիկոնյան	.	.	.	.	.	13
3. Վահան Մամիկոնյան	.	.	.	.	.	25
4. Վահրամ Պահլավունի	.	.	.	.	.	37
5. Թորոս Լևոնի	.	.	.	.	.	48
6. Դավիթ Բեկ	.	.	.	.	.	58

Պատ. խմբագիր՝
Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն

ՎՖ 02564. Պատվեր 397. Տերաժ 3000, Տպագրական
4 ³/₄ մամուլ. Մեկ մամուլում 36480 նշան.
Ստորագրված է տպագրության 15/VI—43 թ.
Հայկեստրաութի տպարան Երևան

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0023686

ԳԻՆԸ 5 Ռ.

A ^{II} 50/8

17022